Մասիս ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

43ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 35 (2045) ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 23, 2023
VOLUME 43, NO. 35 (2045) SATURDAY SEPTEMBER 23, 2023

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

Փարիզ Կը Դատապարտէ Պաքուն, ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի Հրատապ Նիստ Կը Պահանջէ

Ֆրանսան մեծագոյն վճռականութեամբ կը դատապարտէ Լեռնային Ղարաբաղի մէջ Ատրպէյճանի կողմէ ռազմական գործողութեան սանձազերծումը՝ ծանր զինատեսակներու կիրառմամբ, այդ շարքին՝ բնակեցուած գօտիներու դէմ:

«Որեւէ պատրուակ չի կրնար արդարացնել նման միակողմանի գործողութիւնը, որ կը սպառնայ հազարաւոր քաղաքացիական անձերու՝ արդէն իսկ տուժած ամիսներ շարունակուած ապօրինի շրջափակումէ, եւ կը հակասէ բանակցային կարգաւորման հասնելու ուղղութեամբ միջազգային հանրութեան գործադրած ջանքերուն», կը յայտարարէ Ֆրանսայի Արտաքին Գործերու Նախարարութիւնը:

Ֆրանսան Ատրպէյճանին կոչ կ՛ընէ անյապաղ դադրեցնելու յարձակումը եւ յարգելու միջազգային

Շար.ը էջ 4

Լայնածաւալ Ռազմական Գործողութիւններ Լեռնային Ղարաբաղի Դէմ Ատրպէյճանի Թիրախը եւ Նպատակը Հայաստանը Ռազմական Գործողութեան Մէջ Ներքաշելն է. Փաշինեան

Սեպտեմբեր 19-ին, Ատրպէյճանի զինուած ուժերը սկսած են Լեռնային Ղարաբաղի ամբողջ տարածքի հրետակոծութիւնը: Եւ որոշ ժամանակ անց սկսած են նաեւ գործողութիւն Լեռնային Ղարաբաղի շփման գիծը խախտելու եւ Լեռնային Ղարաբաղի մէջ դիրքեր եւ որոշ տեղեկութիւններու համաձայն՝ նաեւ բնակավայրեր վերահսկողութեան տակ առնելու ուղղութեամբ:

Ատրպէյճանի Ռազմական Գործողութիւններուն Հետեւանքով Կան Զոհեր Եւ Վիրաւորներ, որոնց շարքին՝ Կանայք, տարեցներ Եւ երեխաներ: Երեկոյեան յայտնի դարձաւ որ, Ադրբէջանի գործողութիւններուն հետեւանքով կայ 25 զոհ, որոնց 2-ը խաղաղ բնակիչներ են:

Արցախի Հանրապետութեան նախագահ Սամուէլ Շահրամանեանը շտապ հրաւիրած է Անվտանգութեան Խորհուրդի նիստ եւ քննարկած է ստեղծուած իրավիճակն ու հետագայ ընելիքները:

Հաշուի առնելով հազարաւոր մարդոց կեանքին ու առողջութեան սպառնացող վտանգը՝ պաշտօնական Ստեփանակերտը միջազգային դերակատարներուն եւ շահագրգիռ բոլոր կողմերուն կոչ կ՛ընէ անյապաղ ձեռնարկելու անհրաժեշտ բոլոր միջոցները՝ Արցախի նկատմամբ յարձակումը դադրեցնելու ուղղութեամբ:

Ժողովուրդի ուղղուած ելոյթով հանդէս եկաւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան յայտարարելով որ, Ատրպէյճանի թիրախը եւ նպատակը ՀՀ-ն ռազմական գործողութեան մէջ ներքաշելն է:

«ՀՀ սահմանների երկայնքով իրաւդրութիւնն այս պահին կայուն է յարաբերականօրէն, բայց ընդգ-

Շար.ը էջ 5

Վնասուած բնակելի շէնք Ստեփանակերտի մէջ

Հայաստանի Հանրապետութեան Նորանշանակ Աւագ Հիւպատոս Գարէն Իսրայէլեանը Այցելեց ՍԴՀԿ Կեդրոն

Պաշտօնի ստանցման առիթով իր ունեցած հանդիպումներու շարքին, Չորեքշաբթի, Սեպտեմբեր 13-ի երեկոյեան Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելըսի մէջ աւագ հիւպատոս Գարէն Իսրայէլեան, ընկերակցութեամբ՝ խորհրդական Գարէն Յովհաննիսեանի, այցելեց ՍԴՀԿ Փասատինայի կեդրոնը, ուր դիմաւորուեցաւ Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան եւ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի անդամներուն կողմէ:

Ծանօթացման մտերմիկ հանդիպման սկիզբը Վարիչ Մարմինի ատենապետ Ընկ. Վազգէն Խոտանեան ողջունեց ու շնորհաւորեց փորձառու դիւանագէտի պաշտօնի կոչումը՝ հայահոծ ու կարեւոր այս քաղաքէն ներս: Ան խոստացաւ Կուսակցութեան անվերապահ աջակցութիւնն ու համագործակցութիւնը Հիւպատոսութեան հետ՝ ի նպաստ Մայր Հայրենիքին ու Հայաստան-Սփիւռք կապերու ամրապնդման:

Հիւպատոս Իսրայէլեան շնոր-

Շար.ը էջ 14

Յայտարարութիւն՝ ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան

ՍԴ Հնչակեան Կուսակցութեան Կենտրոնական Վարչութիւնը խստօրէն դատապարտում է Ատրպէճանի սանձազերծած պատերազմական գործողութիւնները Արցախի հանրապետութեան խաղաղ բնակչութեան դէմ: Ակնյայտ է, որ Ալիեւի բռնապետական վարչակարգը այս գործողութեամբ աւարտին է ուզում հասցնել 44-օրեայ պատերազմից յետոյ կիսատ մնացած՝ Արցախի հայաթափման ու զաւթման ծրագիրը:

Ակնյայտ է նաեւ, որ Ռուսաստանի խաղաղապահ ուժերը, որոնք կոչուած են ապահովելու Արցախահայութեան անվտանգութիւնն ու ապահովութիւնը, եւս մէկ անգամ ցուցաբերում են իրենց կատարեալ անկարողութիւնն ու անզօրութիւնը՝ կասեցնելու ատրպէյճանական հերթական յարձակումը, փորձելով ստեղծուած իրավիճակի պատասխանատուութիւնը բարդել այլոց վրայ: Անընդունելի ենք համարում Ռուսաստանի նման պահուածքը եւ կրկին կոչ անում կատարել՝ Նոյեմբեր 9-ի համաձայնութեամբ ստանձնած պարտաւորութիւնները:

Միւս կողմից, կոչ ենք անում միջազգային ընտանիքին եւ մասնաւորապէս ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհրդին՝ զանց անել անարդիւնաւէտ դատապարտումի կոչերը եւ անյապաղ սահմանել պատժամիջոցներ, կասեցնելու Ատրպէյճանի հեռահար նկրտումները:

Այս ճակատագրական պահին, երբ բոլորս լցուած ենք ցասման եւ ընդվզումի զգացումներով, աւելի քան կարեւոր է լինել միասնական եւ պահպանել ներքին անդորրը: Առ այդ, կոչ ենք անում մեր հայրենակիցներին չտրուել սադրանքների ու անխոհեմ քայլերի, որոնք բացի ներքին անկայունութիւն առաջացնելուց ու մեր ուժերը ջլատելուց, ոչինչով են նպաստելու իրավիճակի հանգուցալուծման:

Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Կենտրոնական Վարչութիւն
Սեպտեմբեր 19, 2023

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Վստահութեան Չախողուած Հանրաքուէ. Երեւանեան Ընտրութիւնների Արտաքին Քաղաքական Հետեւանքները

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Սեպտեմբերի 17-ին Երեւանում տեղի ունեցած աւագանու ընտրութիւնները տարբեր ուժեր ու մեկնաբաններ դիտարկում էին ոչ միայն որպէս տեղական իրադարձութիւն, այլեւ որպէս վստահութեան հանրաքուէ Նիկոլ Փաշինեանի կառավարութեանը ու նրա վարած քաղաքականութեանը:

Նախընտրական քարոզարշաւի առաջին հատուածում իշխող ուժը, կարծես թէ, ջանքեր էր գործադրում այս ընտրութիւններին աւելորդ քաղաքական նշանակութիւն չտալ եւ մնալ քաղաքային խնդիրների քննարկման դաշտում: Այնուամենայնիւ, այս մօտեցումը փոխուեց ընտրարշաւի վերջին օրերին, երբ ընտրական գործընթացին միացաւ վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Փաշինեանը սկզբից ծաւալուն հարցազրոյց տուեց Հանրային հեռուստաընկերութեան Պետրոս Ղազարեանին, յետոյ ելոյթ ունեցաւ իշխող ուժի քարոզարշաւը եզրափակող հանրահաւաքին, որի ընթացքում գիտակցաբար բարձրացրեց ընտրութիւնների քաղաքական կարեւորութիւնը՝ դրանք ներկայացնելով որպէս Հայաստանի վտանգուած ինքնիշխանութեան համար պայքարի դրուագ:

Մի խօսքով, իշխանութիւնները իրենց իսկ ջանքերով այս համայնքային ընտրութիւնները իրապէս վերածեցին սեփական քաղաքական կուրսի վերաբերեալ հանրաքուէի: Արդէն իսկ ակնյայտ է, որ այդ «հանրաքուէի» արդիւնքները գոհացուցիչ չեն իշխող ուժի համար:

Երեւանի աւագանու ընտրութիւնների աւարտին՝ նոյնիսկ մինչեւ քուէների հաշուարկը, պարզ էր, որ այս պայմանական հանրաքուէն քաղաքական տեսանկիւնից ձախողում էր իշխանութիւնների համար: Երեւանի աւագանու ընտրութիւններին մասնակցել է ընտրողների ընդամէնը 28,44 տոկոսը՝ ի տարբերութիւն 2017 եւ 2018 թուականների քաղաքային ընտրութիւնների, երբ համապատասխանաբար գրանցուել էր 44 եւ 41 տոկոս մասնակցութիւն:

Ինչ վերաբերում է քուէարկութեան արդիւնքներին, ապա դրանք եւս համոզիչ չեն: Իշխող ուժը, վարչական ու քարոզչական խոշոր ռեսուրսների օգտագործմամբ եւ խիստ ցածր մասնակցութեան պայմաններում ստացել է քուէների 30 տոկոսից մի քիչ աւելի: Անկախ այն հանգամանքից, թէ ով ի վերջոյ կ՝ընտրուի Երեւանի քաղաքապետ, այս արդիւնքները ազդեցութիւն են ունենալու ինչպէս Հայաստան-Ատրպէյճան յարաբերութիւնների կարգաւորման գործընթացի, այնպէս էլ արտաքին կարեւոր դերակատարների ընկալումների վրայ:

2021-ի խորհրդարանական արտահերթընտրութիւններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան համոզիչ յաղթանակը միջազգային դերակատարների մօտ ստեղծել էր տպաւորութիւն, թէ հայաստանեան հասարակութիւնը ամբողջովին ընդունել է Ղարաբաղեան երկրորդ պատերազմի արդիւնքները եւ պատրաստ է համակերպուել յետպատերազմեան ծանր իրողութիւնների հետ: Իշխող ուժը եւս այդ ընտրութիւնների արդիւնքները փորձում էր ներկայացնել որպէս ժողովրդի կողմից ստացած մանդատ, որը տրուել է նրանց այսպէս կոչուած «խաղաղութեան օրակարգի» իրագործման համար: Այս պնդումը արւում էր ի հեճուկս այն հանգամանքի, որ ՔՊ-ն արտահերթ ընտրութիւններին զարաբաղեան հարցով մասնակցել էր մէկ օրակարգով, իսկ յետագայում սկսել էր առաջ շարժուել տրամագծօրէն այլ ծրագրով: Այն իրողութիւնը, որ վերջին շրջանում անցկացուած բոլոր հարցումները ցոյց էին տալիս, որ հայաստանեան հասարակութեան բացարձակ մեծամասնութիւնը դէմ է Արցախի հարցում կառավարութեան վարած քաղաքականութիւնը, եւս անտեսւում էր:

Երեւանի աւագանու ընտրութիւնները այդ առումով որոշիչ նշանակութիւն են ունենալու վերոնշեալ ընկալումները փոխելու հարցում: Հայաստանի խոշորագոյն բնակավայրում մասնակցութեան ռեկորդային ցածր թուերը, ինչպէս նաեւ իշխանութիւնների ոչ համոզիչ արդիւնքները ցոյց են տալիս, որ կառավարութիւնը չունի հասարակութեան մեծամասնութեան աջակցութիւնը, այդ թւում հակամարտութեան կարգաւորմանն առնչուող մօտեցումների հարցում:

Այս նոր իրողութիւնը կարող է նաեւ լուրջ ազդեցութիւն ունենալ բանակցային գործընթացի վրա: Այն բանակցային բովանդակութիւնը, որ այժմ քննարկւում է կողմերի միջեւ, վստահաբար ամենաւատն է հայկական կողմերի համար կարգաւորման գործընթացի ամբողջ պատմութեան ընթացքում: Խաղաղ գործընթացը մեծ հաշուով վաղուց վերածուել է ատրպէյճանական վերջնագրերի կատարման գործընթացի: Աւելին, կայ վտանգ, որ Հայաստանը կարող է պարտադրուած լինել հրաժարուել նոյնիսկ այն նուազագոյն կարմիր գծերից, որոնք պաշտօնապէս յայտարարուել էին Նիկոլ Փաշինեանի կողմից ամիսներ առաջ:

Այդ առումով այդպիսի բովանդակութեամբ փաստաթուղթը հնարաւոր է հայաստանեան հանրութեանը «վաճառել» միայն լեգիտիմութեան մեծ պաշարներ ունենալու պարագայում: Երեւանի աւագանու ընտրութիւնները ցոյց տուեցին, որ իշխող ուժը արդէն աւագանու ընտրութիւնները ցոյց տուեցին, որ իշխող ուժը արդէն իսկ լրջագոյն խնդիր ունի հանրային աջակցութեան հետ կապուած: Այս հանգամանքը վստահաբար աւելի է բարդացնելու արդէն իսկ լուրջ ճգնաժամի մէջ գտնուող բանակցային գործընթացը: Եթէ նոյնիսկ հնարաւոր լինի Ատրպէյճանի հետ ընդհանուր յայտարարի գալ խաղաղութեան պայմանագրի օրակարգում առկայ հիմնական տարաձայնութիւնների հարցում, ապա այդ փաստաթուղթը ստորագրելու քաղաքական ռիսկերը այժմ շատ աւելի մեծ են լինելու Հայաստանի իշխանութիւնների համար:

«ՍԻՎԻԼՆԵԹ»

Եւ Այդ Մէկ Մանդատը Ո՞վ է

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

Երեւանի Աւագանու ընտրութեան նախնական արդիւնքի համաձայն, յայտնի է, թէ ինչպէս կը բաշխուի Երեւանի Աւագանու 55 մանդատը: Ըստ ստացած տոկոսների, Աւագանում 24 մանդատ կ՝ունենայ ՔՊ-ն, երկրորդ տեղը զբաղեցնող «Ազգային առաջընթաց» կուսակցութիւնը՝ կամ պարզապէս Հայկ Մարութեանի առաջնորդած ուժը կը ստանայ 14 մանդատ, 12 մանդատ կ՝ունենայ «Մայր Հայաստան» դաշինքը՝ որը առաւել արմատական ընդդիմադիր ուժն էր, Հանրապետութիւն կուսակցութիւնը՝ որ ըստ էութեան ՔՊ ամենահաւանական կոալիցիոն դաշնակիցն է, կ՝ունենայ 8 մանդատ, իսկ Հանրային ձայն կուսակցութիւնը, որն այլ կերպ ասած Վարդան Ղուկասեանն է՝ իր լայվերով յայտնի Դոգը, կը ստանայ 7 մանդատ: Այդպիսով, ստացւում է, որ ՔՊ-ն ու Հանրապետութիւն կուսակցութիւնը կ՝ունենան 32 մանդատ, մինչդեռ Աւագանիում մեծամասնութիւն, ըստ այդմ քաղաքապետի ընտրելու համար պահանջւում է 33 մանդատ:

Ըստ այդմ հարց է առաջանում՝ Երեւանում կառավարող կարգավիճակը պահելու, քաղաքապետ ընտրելու համար որտեղի՞ց է ՔՊ-ն գտնելու այդ մէկ մանդատը, ո՞ր խմբակցութիւնից, ի՞նչ գնով: Միւս երեք ուժերը միասին ունեն քաղաքապետ ընտրելու համար պահանջուող 33 մանդատը, բայց, ժողովրդական խօսքով ասած՝ «իրար հետ չունեն»: Օրինակ, «Մայր Հայաստան» դաշինքը նախընտրական շրջանում թիրախաւորում էր Հայկ Մարութեանին, նրան համարելով ըստ էութեան իշխանութեանը «հայելային» առաջ բերուող արեւմտեան նախագիծ, ընդհուպ համեմատելով Ուքրանիայում «Զելենսկի» նախագծի հետ, յղում անելով հենց այն հանգամանքին, որ Մարութեանն էլ դերասան է: Իր ընոյթի մէջ իւրօրինակ ռադիկալ է «Հանրային ձայնը» եւ ըստ ամենայնի, այդ ուժը չի գնայ կոալիցիայի որեւէ մէկի հետ, քանի որ այդ կերպ կը կորցնի իր «իւրօրինակ ռադիկալութեան» մի զգալի էֆեկտ: Մինչդեռ, պէտք է ենթադրել, որ այդ ուժի առաջնորդի յաւակնութիւնների առաստաղն ամենեւին Երեւանի Աւագանին չէ:

Միեւնոյն ժամանակ, ընդդիմադիր դիրքերից ներկայացող ուժերի համար իհարկէ լինելու է բացատրութեան պրոբլեմը, բացատրութիւն, թէ ինչո՞ւ այդուհանդերձ վեր չեն կանգնում միմեանց տարաձայնութիւններից եւ միաւորուելով չեն ընտրում քաղաքապետ՝ ՔՊ-ին զրկելով իր քաղաքապետի հնարաւորութիւնից: Միւս կողմից, այդ ընտրութեամբ չի լուծւում որեւէ խոշոր, էական հարց, ՔՊ-ին քաղաքապետ ընտրել խանգարելուց բացի: Մինչդեռ, երեք ուժերը յետոյ պէտք է պատասխանատու լինեն իրենց ստեղծած իրավիճակի զարգացման համար: Այդ իսկ պատճառով, մեծ հաւանականութեամբ նրանք ձեռնպահ կը մնան այդպիսի իրավիճակ ստեղծելուց: Առաւել եւս, եթէ ՔՊ-ն ինքնին չունի բաւարար 33 մանդատ եւ այդ մէկ մանդատը պէտք է վերցնի այդ երեքից:

Եթէ նրանց նպատակը ճգնաժամ ստեղծելն է, ապա կարող են ստեղծել առանց քաղաքապետ ընտրելու էլ: Այլ հարց է, թէ նրանք կարո՞ղ են երաշխաւորել իրենց մանդատաւորների աներերութիւնը, երաշխաւորել, որ իրենցից որեւէ մէկը չի օգնի ՔՊ-ին ընտրել քաղաքապետ՝ տալով այդ մէկ ձայնը: Այդ ամէնով հանդերձ, զուտ թուաբանական այդ հաշուարկներն անշուշտ Երեւանի քաղաքապետի ընտրութեան գործընթացի մի բաղադրիչն են, միայն, այն էլ թերեւս բաւականին մակերեսային բաղադրիչը, քանի որ խորքային առումով այդ ընտրութիւնը արտացոլում է Հայաստանի քաղաքական դաշտում խմորուող բաւականին լայն վերադասաւորումների եւ վերաձեւումների մի ընթացքի մեկնարկ, այդ թւում ներիշխանական տիրոյթն ու արտաքին քաղաքական տիրոյթը ներառող, որոնց կ՝անդրադառնամ յաջորդիւ:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of **the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Երեւանի Ընտրութեան Արդիւնքներով Ուժերէն Որեւէ Մէկը Չունի Մեծամասնութիւն

Երեւանի ընտրական տեղամասերէն մին

Երեւանի աւագանիի Սեպտեմբեր 17-ի ընտրութիւններու նախնական արդիւնքներով՝ 5 քաղաքական ուժ հնարաւորութիւն ունի աւագանիի անդամի մանտաթ ստանալու, սակայն այդ ուժերէն որեւէ մէկը չէ հաւաքած 50 տոկոսէն աւելի ձայներ, հետեւաբար 4 կուսակցութիւններու եւ 1 կուսակցութիւններու դաշինքի թեկնածուներու ցուցակներու առաջին հորիզոնականին ներկայացուած անձերէն ոեւէ մէկը օրէնքի ուժով չի կրնար դառնալ քաղաքապետ:

ԿԸՑ-ի հրապարակած նախնական տուեալներով՝ «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւնը ստացած է մասնակիցներու ձայներուն 32,57 տոկոսը, «Հանրային Ձայն» կուսակցութիւնը՝ 9,68 տոկոսը, «Ազգային Առաջընթաց» կուսակցութիւնը՝ 18,89 տոկոսը, «Հանրապետութիւն» կուսակցութիւնը՝ 11,32 տոկոսը, «Մայր Հայաստան» կուսակցութիւններու դաշինքը՝ 15,43 տոկոսը:

Ըստ Երեւան քաղաքին տեղական ինքնակառավարման մասին օրէնքին՝ եթէ աւագանիի ընտրութիւններուն արդիւնքով որեւէ կուսակցութիւն չի ստանար աւագանիի անդամներու տեղերու 50 տոկոսէն աւելին, ապա քաղաքապետը կ՚ընտրուի գաղտնի քուէարկութեան միջոցով:

Արդէն իսկ «Հանրային Ձայն» կուսակցութեան ղեկավար Վարդան Ղուկասեանը՝ Տոկը, դաշինք կազմելու առաջարկ ըրած է «Ազգային Առաջընթաց» կուսակցութեան, որ կը ղեկավարէ նախկին քաղաքապետ Հայկ Մարութեանը, եւ «Մայր Հայաստան» կուսակցութիւններու դաշինքին, որ կը ղեկավարէ նախկին ընդդիմադիր պատգամաւոր, ՀՀ երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի աջակից Անդրանիկ Թեւանեանը:

Եթէ նոյնիսկ քաղաքական ուժերը կազմեն դաշինք՝ «Հանրային ձայն» + «Ազգային Առաջընթաց» + «Մայր Հայաստան», ապա այս պարագային նոյնիսկ ձայներու 50 տոկոսի շեմը չի յաղթահարուիր: 50 տոկոսի շեմը չի յաղթահարուիր նաեւ «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւն + «Հանրապետութիւն» կուսակցութիւն պարագային. «Քաղաքացիական Պայմանագիր» ու «Հանրապետութիւն» կուսակցութիւններու դաշինքի պարագային՝ երկու ուժերը միասին կը ստանան 32 մանտաթ, իսկ միւս երեք քաղաքական ուժերը եթէ դաշինք կազմեն, կը ստանան 33 մանտաթ:

«Հանրային Ձայն» կուսակցութեան ցուցակը գլխաւորող Արտակ Գալստեանը կալանաւորուած է՝ շորթման մեղադրանքով:

ԵՄ Դիտորդները Արձանագրած Են Լաւ Կազմակերպուած Քուէարկութիւն Երեւանի Աւագանիի Ընտրութիւններուն

Եւրոպացի դիտորդները մամլոյ ասուլիսի ընթացքին

Եւրոպայի Խորհուրդի տեղական եւ տարածքային իշխանութիւններու գոնկրէսը, որ աւարտած է իր դիտորդական առաքելութիւնը Երեւանի աւագանիի ընտրութիւններուն, քուէարկութեան գործընթացը բնութագրած է որպէս «հանգիստ, խաղաղ եւ լաւ կազմակերպուած», իսկ մասնակցութեան ցուցանիշը որակած է որպէս «պատմականօրէն ցած»: Այս մասին կը նշուի Գոնկրէսի տարածած յայտարարութեան մէջ:

«Ընդհանուր առմամբ, պատուիրակութիւնը արձանագրած է հանգիստ, խաղաղ եւ լաւ կազմակերպուած ընտրութիւններու օր՝ առանց լուրջ միջադէպերու կամ անբնական երեւոյթի», նշուած է պատուիրակութեան յայտարարութեան մէջ, ուր նաեւ արձանագրուած է, որ նոյնականացման սարքերը եւ տեսախցիկները աշխատած են անխափան՝ նուազեցնելով կեղծիքի հնարաւորութիւնը:

9 հոգիէ կազմուած պատուիրակութիւնը՝ Գարլա Տեժոնկէի գլխաւորութեամբ, պատահականութեան սկզբունքով այցելած է 113 ընտրատեղամաս Երեւանի բոլոր 12 վարչական շրջաններու մէջ:

«Մենք կ՚ողջունենք այն բարեփոխումները, որոնք տեղի ունեցած են Ընտրական օրէնսգիրքի փոփոխման բերումով, ինչպէս նաեւ Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովի ջանքերը, որոնք նպաստեցին ընտրութիւններու օրուան ընդհանուր թափանցիկութեան ու արհեստավարժութեան: Այդ փոփոխութիւնները կը ներառէին ընտրատեղամասերու նախագահներու եւ քարտուղարներու յատուկ վերապատրաստում, եւ մենք խորհուրդ կու տանք ապագային գանոնք պարտադիր դարձնել՝ ընտրական ընթացակարգերը աւելի օրինաչափական դարձնելու նպատակով», գրած է Եւրոպայի խորհուրդի տեղական եւ տարածքային իշխանութիւններու գոնկրէսը:

ԵՄ դիտորդները, սակայն, ցաւով արձանագրած են ընտրողներու շրջանակին մէջ հետաքրքրուածութեան պակասը:

«Պատրաստ Ենք Օգնելու Հայկ Մարութեանին, Եթէ Ինքն Ալ Մեզի Օգնէ». Անդրանիկ Թեւանեան

«Մայր Հայաստան» դաշինքի ղեկավար Անդրանիկ Թեւանեան մամուլի ասուլիսի ժամանակ ըսաւ, որ իրենք ունին սկզբունքներ, որոնք եթէ այլ ուժեր ընդունին, ապա հնարաւոր կ՚ըլլայ համագործակցել. «Առաջինը՝ պէտք է գնահատական տրուի Նիկոլ Փաշինեանի վարած քաղաքականութեանը: Երկրորդը այն է, որ այն ուժը, որի հետ մենք կը համագործակցենք, պէտք է հնարաւորութիւն չտեսնի «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան հետ համագործակցութեան, եւ այդ ուժը պէտք է կիսի մեր ծրագիրը, այն է՝ ամբողջական իշխանափոխութիւն Հայաստանում»:

Թեւանեան ըսաւ, որ իրենք բաց են քննարկումներու համար, որոնք կ՚ուզեն համագործակցիլ. Ինչ կը վերաբերի Հայկ Մարութեանի հետ համագործակցութեան, ապա Թեւանեան ըսաւ. «Մենք կարող ենք օգնել, որպէսզի ինքը ձայներ հաւաքի, բայց դա այն դէպքում, եթէ ինքը կիսի մեր տեսակէտները ամբողջական իշխանափոխութեան մասով. եթէ այս մասով լինեն յստակ յայտարարութիւններ, ապա մենք կը շարունակենք քննարկումները»:

«Մայր Հայաստան» դաշինքի ղեկավար Անդրանիկ Թեւանեան

Գորիս-Ստեփանակերտ եւ Ակնա-Ստեփանակերտ Ճանապարհով Տեղափոխուած է Ալիւր, Բժշկական եւ Մաքրութեան Պարագաներ

Սեպտեմբեր 18-ին, Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտէի Ստեփանակերտի գրասենեակի եւ Արցախի մէջ խաղաղապահ առաքելութիւն իրականացնող ռուսական զօրախումբի հրամանատարութեան հետ ձեռք բերուած պայմանաւորուածութեան համաձայն, Բերձորի միջանցքով՝ Գորիս-Ստեփանակերտ մայրուղիով Ստեփանակերտ տեղափոխուած է մօտ 23 թոն հայկական արտադրութեան ալիւր, իսկ Ակնա-Ստեփանակերտ ճանապարհով՝ արտասահմանեան (ռուսական, զուիցերիական) արտադրութեան բժշկական եւ մաքրութեան պարագաներ, որոնք փորձաքննութենէն յետոյ պիտի յատկացուին համապատասխան գերատեսչութիւններուն եւ պիտի օգտագործուին ըստ կարիքներու. կը տեղեկացնեն Արցախի տեղեկատուական շտաբէն:

Տեղեկացուցած են նաեւ, որ քանի մը օր յետոյ կրկին նոյն ուղղութիւններով Ռուսիոյ Ռոսթով քաղաքէն բեռներու տեղափոխում կը նախատեսուի ԿԽՄԿ-ի ինքնաշարժներով:

ԼՈՒՐԵՐ

Մենք Այլեւս Չենք Կրնար Յոյս Դնել Ռուսաստանի Վրայ, Որ Մեզ Պաշտպանէ. ՀՀ Վարչապետի Հարցազրոյց «Politico»ևին

Նիկոլ Փաշինեան «POLITICO» պարբերականին հետ ունեցած հարցազրոյցի ընթացքին

Ուքրանական հակամարտութիւնը ցոյց կու տայ, որ Հայաստանը այլեւս չի կրնար ապաւինիլ Մոսկուային՝ որպէս իր անվտանգութեան երաշխաւոր, նոյնիսկ այն պարագային, երբ կը մեծնան մտավախութիւնները Ատրպէյճանի հետ բաց հակամարտութեան վերադառնալու առնչութեամբ:

«POLITICO» պարբերականին տուած հարցազրոյցին մէջ այս մասին ըսած է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Ըստ պարբերականին՝ Փաշինեանի ընդգծուած քննադատութիւնը Ռուսաստանի՝ որպէս Կովկասի մէջ ոստիկան գործելու անկարողութեան վերաբերեալ միայն կ՚ուժեղացնէէ այն զգացումը, որ Քրեմլինը կը կորսնցնէ իր ազդեցութիւնը եւ չունի երբեմնի շատ զովաբանուած զերտէրութեան կարգավիճակը նախկին խորհրդային հանրապետութիւններուն մէջ, որոնց ժամանակին Մոսկուան կը համարէր իր ազդեցութեան գօտին:

«POLITICO»-ի փոխանցմամբ՝ Երեւանի մէջ հիասթափութիւնը կրնայ լուրջ շրջադարձ ըլլալ 2,8 միլիոննոց երկրին համար, քանի որ ԽՍՀՄ-ի փլուզումէն յետոյ ան իր երկաթուղիի, ուժանիւթային ոլորտի եւ նոյնիսկ իր սահմաններու վերահսկողութեան մեծ մասը պատուիրակած է Ռուսաստանին: 2020 թուականին Հայաստանը 44-օրեայ պատերազմ մղեց Թուրքիոյ կողմէ աջակցութիւն ստացած Ատրպէյճանի աւելի ուժեղ զօրամիաւորումներու դէմ, հակամարտութեան հետեւանքով հազարաւոր մարդիկ զոհուեցան իւրաքանչիւր կողմէ եւ Լեռնային Ղարաբաղի մէջ զինադադարը պահպանելու համար տեղակայուեցան ռուս խաղաղապահները: Այժմ Ռուսաստանը ամբողջութեամբ ներգրաւուած է Ուքրանիոյ հետ պատերազմին մէջ, ուստի Երեւանի մէջ կը մեծնան մտավախութիւնները, թէ արդեօք ռուսական բանակը պատրա՞ստ է կամ ի վիճակի՞ է պահպանել խաղաղութիւնը Կովկասի մէջ: Այդ ընդգծուած մտահոգութիւն է, որովհետեւ կան բոլոր վտանգները, որ Հայաստանը կրնայ վերսկսիլ Ատրպէյճանի հետ մարտերը Լեռնային Ղարաբաղի համար:

«Ուքրանիայում տեղի ունեցող իրադարձութիւնների արդիւնքում փոխուել են Ռուսաստանի հնարաւորութիւնները», ըսած է Փաշինեան՝ ընդունելով, որ Մոսկուան կը ձգտի խուսափելու Ատրպէյճանն ու անոր մերձաւոր դաշնակից Թուրքիան օտարելէ, որոնք երկուքն ալ Քրեմլինի համար մինչեւ ուքրանական պատերազմը ունեցած են ռազմավարական նշանակութիւն:

«Մեր ռազմավարութիւնը պէտք է լինի այն, որ փորձենք այս իրավիճակում առաւելագոյնս նուազեցնել մեր կախուածութիւնը ուրիշներից: Մենք ուզում ենք ունենալ անկախ երկիր, ինքնիշխան երկիր, բայց պէտք է ճանապարհներ ունենանք, որպէսզի չյայտնուենք Արեւմուտքի ու Արեւելքի, Հիւսիսի եւ Հարաւի բախումների կեդրոնում□ Չի կարող լինել դէպք, երբ Հայաստանը դառնայ «փրոքսի»: Սա անթոյլատրելի է: Մոտելը, որով մենք խնդիրներ ունենք մեր հարեւանների հետ, եւ պէտք է հրաւիրենք ուրիշներին պաշտպանելու մեզ, կարեւոր չէ, թէ ովքեր են նրանք, շատ խոցելի մոտել է», վարչապետին խօսքը մէջբերած է «POLITICO»-ն:

Մոսկուան Կրկին Կը Շեշտէ՝ Վերադարձ Եռակողմ Յայտարարութիւններուն

Մոսկուան կրկին շեշտում է՝ Լեռնային Ղարաբաղում իրավիճակի կարգաւորման հենքը Մոսկուայի, Երեւանի եւ Բաքուի միջեւ ստորագրուած եռակողմ յայտարարութիւններն են:

«Մենք առայժմ կենտրոնանում ենք դրանց վրայ», - ըսած է ՌԴ նախագահի խօսնակ Տմիտրի Պէսկովը՝ մեկնաբանելով Ղարաբաղի հարցով քառակողմ հանդիպում կայացնելու Անգարայի առաջարկը:

«Փաստն այն է, որ կայ բաւականին կուռ եւ իրագործելի հիմք՝ եռակողմ փաստաթղթերը: Այդ փաստաթղթերի հիման վրայ պէտք է համաձայնութիւն ձեռք բերուի քաղաքական եւ դիւանագիտական կարգաւորմանը վերադառնալու համար»,- ընդգծած է Փութինի խօսնակը:

Պաքուն Երեւանէն Կը Պահանջէ Չմեծցնել Ռազմական Ներուժը, Լուծարել ԼՂ-ի Կառոյցները

Պաքուն Երեւանէն կը պահանջէ չմեծցնել ռազմական ներուժը, լուծարել Արցախի պետական կառոյցները, այս մասին կ՚ըսուի Ատրպէյճանի Արտաքին Գործերու Նախարարութեան տարածած հաղորդագրութեան մէջ:

«Հայաստանէն կը պահանջենք դադրեցնել մեծցնել ռազմական ներուժը, ձեռնպահ մնալ վրէժխնդրական ծրագրերէն, չխախտել եւ կասկածի տակ չդնել Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնն ու ինքնիշխանութիւնը, դադրեցնել անջատողականութեան եւ ահաբեկչութեան հովանաւորումը Ատրպէյճանի Ղարաբաղի տարածաշրջանին մէջ: Կը պահանջենք նաեւ անյապաղ դուրս բերել հայ զինուորները, լուծարել Հայաստանին ենթակայ խամաճիկ վարչակարգի ռազմական եւ այսպէս կոչուած «կառավարական» կառոյցները, զինաթափել Ատրպէյճանի տարածքին անօրինական կերպով տեղակայուած հայկական բոլոր զինուած ուժերը», յայտարարած է պաշտօնական Պաքուն՝ յաւելելով, որ «այդ պարագային ապօրինի վարչակարգի, այսպէս կոչուած, «ներկայացուցիչներու» նկատմամբ կրնայ կիրառուիլ համաներում:

Ատրպէյճանի Արտաքին Գործերու Նախարարութեան մամլոյ ծառայութեան համաձայն՝ ԱԳՆ-ի մէջ հանդիպում կայացած է այդ երկրին մէջ հաւատարմագրուած դիւանագէտներու եւ Ալիեւի վարչակազմին, այդ շարքին՝ Ատրպէյճանի նախագահի աշխատակազմի ներկայացուցիչներուն, արտաքին գործերու նախարարի տեղակալին միջեւ:

Հանդիպման արդիւնքներուն վերաբերեալ տարածած հաղորդագրութեան համաձայն՝ ատրպէյճանցի պաշտօնեաները օտարերկրեայ դիւանագէտներուն դժգոհած են հայկական կողմի «ապակառուցողական քայլերէն», մարդասիրական ճգնաժամը «քաղաքականացնելու» փորձերէն, հերթական անգամ յայտարարած է, որ Լեռնային Ղարաբաղի շրջափակման մասին պնդումները իրականութեան չեն համապատասխաներ:

Հաղորդագրութեան մէջ անդրադարձ կայ նաեւ ԱՄՆ Ծերակոյտի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովին մէջ անցեալ շաբաթ տեղի ունեցած լսումներուն, որ ատրպէյճանցի պաշտօնեաները «բեմադրութիւն» որակած են: «Կը ցաւինք, որ Պետական Քարտուղարութեան ներկայացուցիչը միացած է միակողմանի հակատրպէյճանական յայտարարութիւններուն», ըսուած է Ատրպէյճանի ԱԳՆ-ի հաղորդագրութեան մէջ:

Կառավարութեան Շէնքին Առջեւ Բախումներու Հետեւանքով Տուժած Են Ոստիկաններ

Կառավարութեան շէնքի առջեւ բախումներու հետեւանքով կան տուժածներ, որոնց շարքին՝ ոստիկաններ: Լրատուական ծառայութիւնը տուժած ոստիկանների թիւը դեռ չի հրապարակում:

Առողջապահութեան նախարարութիւնը տեղեկացուց, որ հաւաքուած ցուցարարներու հրահրած անկարգութիւններուն հետեւանքով բժշկական օգնութեան դիմած են ոստիկաններ եւ քաղաքացիներ,:

Զանգուածային անկարգութիւններ կատարելու հրապարակային կոչեր հնչեցնելու մասնակցելու դէպքերուն առթիւ նախաձեռնուած է քրեական վարոյթ:

Միւս կողմէ, Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը յորդորեց տուրք չտալ հնարաւոր սադրանքներուն, ցուցաբերել քաղաքացիական բարձր պատասխանատուութիւն:

«ՀՀ Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը տեղեկացնում է, որ ներկայումս Հայաստանի Հանրապետութիւնում առկայ են զանգուածային անկարգութիւնների կազմակերպման եւ իրականացման իրական վտանգներ, ուստի յորդորում ենք տուրք չտալ հնարաւոր սադրանքներին, ցուցաբերել քաղաքացիական բարձր պատասխանատուութիւն, չէզոքացնելով Հայաստանի Հանրապետութեան ներքին անվտանգութիւնն ապակայունացնող ցանկացած տեսակի գործողութիւն», - նշուած է ԱԱԾ յայտարարութեան մէջ:

Փարիզ Կը Դատապարտէ Պաքուն

Շարունակուած էջ 1-էն

իրաւունքը: Պաշտօնական Փարիզը կը շեշտէ, որ Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական բնակչութեան ճակատագրին համար միակ պատասխանատուն է պիտի համարէ Ատրպէյճանը:

ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի մշտական անդամ Ֆրանսան կը պահանջէ հրատապ Խորհուրդի նիստ հրաւիրել, ըսուած է յայտարարութեան մէջ: Պաշտօնական Փարիզը կը նշէ, որ «սերտօրէն կը համագործակցի եւրոպացի եւ ամերիկացի գործընկերներուն հետ, որպէսզի ուժեղ պատասխան տրուի այս անընդունելի յարձակման, որ կը սպառնայ տարածաշրջանի անվտանգութեան»:

Փաշինեանն Ու Պլինքընը Ընդգծած Են Ուժի Կիրառման Անթոյլատրելիութիւնը

Վարչապետ Նիկոլ Փաշինեան հեռախօսազրոյց ունեցած է ԱՄՆ պետական քարտուղար Էնթընի Պլինքընի հետ, յայտնած է Փաշինեանի խօսնակը:

Անոր փոխանցմամբ՝ քննարկուած է Ատրպէյճանի յարձակումէն յետոյ Լեռնային Ղարաբաղի մէջ ստեղծուած իրավիճակը: Երկուստեք ընդգծուած է ուժի կիրառման անթոյլատրելիութիւնը եւ ապամագլցողութեան համար միջազգային մեխանիզմներու կիրառման անհրաժեշտութիւնը:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

www.massisweekly.com

Սուրէն Պապիկեանը եւ Հիւրերը Դիտարկած են «Արծիւ Գործընկեր-2023» Հայ-Ամերիկեան Զօրավարժութեան Ընթացքը

Պաշտպանութեան Նախարար Սուրէն Պապիկեան կը հետեւի Հայ-Ամերիկեան զինավարժութիւններուն

Սեպտեմբեր 15-ին Պաշտպանութեան Նախարարութեան խաղաղապահ գումարտակի «Զառ» ուսումնական կեդրոնին մէջ ՀՀ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեանը ՀՀ-ի մէջ ԱՄՆ արտակարգ եւ լիազօր դեսպան Քրիսթինա Քվինի, պաշտպանութեան նախարարի առաջին տեղակալ, Զինուած Ուժերու Գերագոյն Շտաբի պետ, զօրավար-լեյթենանթ Իտուարտ Ասրեանի, ԱՄՆ ցամաքային ուժերու Եւրոպայի եւ Ափրիկրի հրամանատարութեան շտաբի պետի տեղակալ, գումարտակային զօրավար Փաթրիք Էլիսի, 10-րդ լեռնային բաժանմունքի հրամանատար, զօրավար-մայոր Կրեկորի Անտըրսընի եւ Հայաստանի Հանրապետութեան մէջ հաւատարմագրուած օտարերկրեայ ռազմական կցորդներու եւ ներկայացուցիչներու հետ դիտարկած է միջազգային խաղաղապահ առաքելութիւններուն մէջ մասնակցութեան նախապատրաստման շրջանակին տեղի ունեցող «Արծիւ Գործընկեր-2023» հայ-ամերիկեան զօրավարժութեան ընթացքը:

Հրաւիրեալները հետեւած են գործնական վարժանքի աշխոյժ փուլին:

Այնուհետեւ պաշտպանական գերատեսչութեան ղեկավարին եւ հիւրերուն ներկայացուած են զօրավարժութեան կառավարման կեդրոնը, վերազինուած լսարանները, ուր կը մշակուին սենարները ու կը կայացուին որոշումները:

Այցի աւարտին խաղաղապահ գումարտակի հրամանատարը քննարկումներու սրահին մէջ ներկայացուցած է ՀՀ զինուած ուժերու խաղաղապահ զօրքերուն մասնակցութիւնը շարք մը երկիրներու մէջ խաղաղարար առաքելութիւն իրականացնելու ժամանակ՝ ընդգծելով, որ այդ տեղամասերուն մէջ մեծ է համագործակցութիւնը ամերիկեան բանակի խաղաղապահներուն հետ:

Պլինքընի Տեղակալը Կը Նշէ՝ ԱՄՆ Պէտք է Մեծցնէ Հայաստանի Զարգացման Աջակցութիւնը, Պաշտպանական Համագործակցութիւնը

Միացեալ Նահանգները պէտք է մեծցնէ Հայաստանի զարգացման աջակցութիւնը, ինչպէս նաեւ երկրին հետ պաշտպանական համագործակցութիւնը: Այս մասին յայտնած է պետական քարտուղարի Եւրոպայի եւ Եւրասիոյ հարցերով օգնականի պաշտօնակատար Եուրի Քիմը:

«Մենք պէտք է մեծցնենք օգնութեան շրջանակը, որ մենք կը տրամադրենք Հայաստանին, ըլլայ այդ զարգացման աջակցութիւն, ըլլայ այդ պաշտպանական ոլորտին մէջ գործընկերութիւն կամ անվտանգութեան ոլորտին մէջ աշխատանք», յայտնած է պաշտօնեան ԱՄՆ Ծերակոյտի Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովին մէջ Լեռնային Ղարաբաղի ճգնաժամին վերաբերեալ լսումներու ժամանակ:

Քիմ յաւելած է, որ աջակցութիւնը պէտք է աւելցնել այնքան, որքան որ ընդունելի ըլլայ Հայաստանի համար:

Ամերիկացի դիւանագէտը ըսած է. «Լաչինի միջանցքը պէտք է բացուի հիմա՛, հիմա՛, ո՛չ թէ յետոյ, այս հարցով ձգձգում պէտք չէ ըլլայ»:

Պետական քարտուղարի օգնական Եուրի Քիմ

Յանձնաժողովի նախագահ, ծեռակուտական Պոպ Մենենտեսը Պետական Քարտուղարութեան ներկայացուցիչին ուղղուած հարցումին մէջ ընդգծեց, որ Ատրպէյճանը զօրքեր կը կուտակէ Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի հետ սահմանին եւ հետաքրքրուեցաւ՝ արդեօ՞ք կարելի է նման իրավիճակի մէջ լուծում գտնելու ցանկութեան մասին Ալիեւի կատարած յայտարարութիւնները լուրջ ընդունիլ:

Լայնածաւալ Ռազմական Գործողութիւններ

Շարունակուած էջ 1-էն

ծում եմ՝ այս գործողութեան հիմնական թիրախը եւ նպատակը Հայաստանի Հանրապետութեանը ռազմական գործողութեան մէջ ներքաշելն է», նշեց Փաշինեան՝ ընդգծելով, որ ՀՀ-ն ռազմական գործողութիւններուն մէջ ներքաշուած չէ:

Փաշինեան նշեց նաեւ, որ Հայաստանը Լեռնային Ղարաբաղի մէջ բանակ չունի:

Հայաստանի վարչապետը ընդգծեց. «Տարօրինակ եւ տարակուսելի էր տեղեկութիւնը, որ Ատրպէյճանը այդ գործողութիւնների մեկնարկի մասին պաշտօնապէս տեղեակ է պահել Ռուսաստանի Դաշնութեանը: Ի հարկէ, սա Ատրպէյճանի վարկածն է, սակայն փաստն այն է, որ մենք գոնէ այդ գործողութեան մասին Ռուսաստանի մեր գործընկերներից որեւէ տեղեկատուութիւն չենք ստացել»:

Հայաստանի կառավարութեան ղեկավարը ընդգծեց, որ այսպիսով Ատրպէյճանը մեկնարկած է Լեռնային Ղարաբաղի բնակչութեան ցեղային զտումներու ենթարկելու ցամաքային գործողութիւնը:

«Մենք կարծում ենք, որ առաջինը Ռուսաստանի Դաշնութեան խաղաղապահ ուժերը պէտք է միջոցներ ձեռնարկեն, եւ երկրորդը՝ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդը նոյնպէս ակնկալում ենք, որ միջոցներ ձեռնարկի»:

«Եւ նաեւ մեր հանրութեան ուշադրութիւնը կ՛ուզեմ հրաւիրել ներքին եւ արտաքին շարք մը ուժերու վրայ, որոնք անպայմանօրէն կ՛ուզեն, որ Հայաստանը ներքաշեն լայնածաւալ ռազմական գործողութիւններու մէջ: Այդ տեսանելի է, եւ մենք մեր դիրքորոշմամբ կ՛արձանագրենք, որ Հայաստանի Հանրապետութիւնը ռազմական մագլցումի մէջ ներքաշելու փորձերը մեզի համար անընդունելի են եւ մենք պիտի կառավարենք այս գործընթացը, ինչքան ալ կը հասկնանք, սիրելի ժողովուրդ, այս իրադրութեան մէջ մեր բոլորին զգացողութիւններուն զգացական եւ բազմաթիւ այլ խնդիրներ: Բայց մենք պէտք չէ հնարաւորութիւն տանք, որ որոշ մարդիկ, որոշ ուժեր՝ արտաքին, նաեւ ներքին, Հայաստանի պետականութիւնը դնեն հարուածի տակ: Յաւօք պիտի արձանագրեմ, որ, ինչպէս եւ կը սպասուէր, հիմա արդէն տարբեր տեղերէ կը հնչեն, ընդհուպ Հայաստանի մէջ յեղաշրջում իրականացնելու կոչեր», իր խօսքին մէջ ըսաւ վարչապետը:

Առաւօտեան Պաքուն նախ Պաշտպանութեան բանակը մեղադրեց սադրիչ գործողութիւններ իրականացնելու համար, որուն հետեւանքով երկու տարբեր պայթումներէ իբր 6 ատրպէյճանցի զոհուած է, ապա յայտարարեց Ղարաբաղի մէջ «հակահաբեկչական գործողութիւններու» մեկնարկի մասին:

Ատրպէյճանի Պաշտպանութեան Նախարարութիւնը յայտարարած է, որ Ղարաբաղի մէջ «հակահաբեկչական գործողութիւններ» կը սկսի, այդ շարքին՝ «վերականգնելու Ատրպէյճանի հանրապետութեան սահմանադրական կարգը»:

«Ղարաբաղի տնտեսական տարածաշրջանին մէջ լայնածաւալ սադրանքները ճնշելու, հայկական զինուած ուժերու զինաթափումն ու մեր տարածքներէն դուրսբերումը, ռազմական ենթակառուցուածքները չէզոքացնելու, բռնագրաւումէն ազատագրուած տարածքներ վերադարձող քաղաքացիական բնակչութեան, շինարարական վերականգնողական աշխատանքներու մէջ ներգրաւուած քաղաքացիական ծառայողներու եւ մեր զինուորականներու անվտանգութիւնն ապահովելու, ինչպէս նաեւ Ատրպէյճանի հանրապետութեան սահմանադրական կարգը վերականգնելու նպատակով, տարածաշրջանին մէջ սկսուած են տեղական բնոյթի հակահաբեկչական միջոցառումներ», ըսուած է Ատրպէյճանի Պաշտպանութեան Նախարարութեան յայտարարութեան մէջ:

Պաքուն կը նշէ, որ ատրպէյճանական կողմը իր գործողութիւններուն մասին տեղեկացուցած է Ռուսաստանի Դաշնութեան խաղաղապահ զօրախումբի հրամանատարութիւնը եւ Թուրք-ռուսական դիտորդական կեդրոնին ղեկավարութիւնը:

Ատրպէյճանի նախագահի օգնական Հիքմեթ Հաճիեւ, իր հերթին, յայտնած է, որ Ղարաբաղի հայերուն ուղարկուած են SMS հաղորդագրութիւններ՝ նախազգուշացնելով հակահաբեկչական գործողութիւններու մասին:

«Հաղորդագրութիւններուն մէջ հայերուն կը յորդորուէր հեռու մնալ ռազմական կառոյցներէ», ըսած է Հաճիեւ:

Հազարաւորներ Ներկայ Եղան Հայաստանի Անկախութեան 33-րդ Տարեդարձի Փառատօնին

Իսկական մեծ տօնահանդէս-փառատօն մըն էր որ տեղի ունեցաւ անցեալ Կիրակի, Սեպտեմբերի 17, 2023ին, Կլենտէյլի Վերտիւկօ Բարք ընդարձակ զբօսայդիին մէջ:

Նոր Սերունդ Մշակութային Միութեան կողմէ կազմակերպուած սոյն միջոցառումը՝ օժանդակութեամբ Հայ-Ամերիկեան Խորհուրդի (ՀԱԽ), նուիրուած էր Հայաստանի անկախութեան 33-րդ տարեդարձին: Արդարեւ աւանդութիւն դարձած այս տօնախմբութիւնը՝ նախորդ տարիներուն տեղի չէր ունեցած «քօրօնա» համավարակի եւ 44 օրուան պատերազմին պատճառով:

Արդարեւ, առաւօտեան ժամը 11:00-էն սկսեալ, արտակարգ տօնական իրավիճակ կը տիրէր ընդարձակ զբօսայդիէն ներս: Մարդիկ կարծէք կ՚ուզէին պահ մը մոռացութեան տալ մօտաւոր անցեալի տխուր պատահարները եւ լաւատեսութեամբ ու նոր յոյսերով նայիլ ապագային:

Այս տարի փաօատօնը առաւել կազմակերուած էր, հաճելին ու օգտակարը իրարու ընդելուզուած ըլլալով, դարձած էր մեծ ժամադրավայր մը գեղեցիկ այլազանութիւններու:

Ուշագրաւ էին փառատօնի տասնեակ մը տաղաւարները: Առաջին անգամ ըլլալով, մասնաւոր տեղեր յատկացուած էին Հայաստանեան արտադրատեսակներուն, որոնք գեղեցիկ էին, պիտանի եւ հանրամատչելի գիներով վաճառքի հանուած:

Ուտեստեղէններու տաղաւարներուն մէջ մեծ ժողովրդականութիւն կը վայելէր հայկական խորոված ու պաղպաղակը: Գործադրութեան դրուած էր մանկական շոգեկառքը, որ մնայուն շրջադարձի մէջ էր զբօսայդիէն ներս: Իսկ պատանիներու ու փոքրիկներու համար ստեղծուած էին ժամանցի այլ տարբեր (վիթխարի բուչիկներ, օրօրոցներ, սահանքի աշտարակներ, եւայլն):

Տօնական զուարթ մթնոլորտին իր կարեւոր բաժինն ունեցաւ ձայնասփռուող հայկական երգն ու երաժշտութիւնը, ստեղծելով բարձր տրամադրութիւն բոլորին մօտ:

Յետ միջօրէի ժամը 2:00-ին գործադրուեցաւ օրուան պատշաճ յայտագիր մը: Հանդիսավարները՝ սրտագին ջերմ խօսքերով ողջունեցին մեր փառապանծ հայրենիքի անկախութեան 33-րդ տարեդարձը, շնորհաւորեցին անոր յառաջընթացը տարբեր բնագաւառներու մէջ, միաժամանակ յիշատակեցին մեր քաջարի զինուորները, որոնցմէ շատեր իրենց արեան գնով, հերոսաբար նահատակուեցան արցախեան 44 օրուան պատերազմի օրերուն:

Հայաստանի անկախութեան 33-րդ տարեդարձին առիթով ողջոյնի եւ շնորհաւորական ջերմ խօսքերով հանդէս եկան հայ ժողովուրդի մեծ բարեկամ, Գալիֆորնիոյ սենատի անդամ Անթոնիօ Փորթանթինոն: Ան դրուատալից արտայայտութիւններ ունեցաւ հայ ժողովուրդի եւ Հայաստանի մասին, որ այցելած էր չորս անգամ: Ան իր անվերապահ նեցուկն յայտնեց նաեւ Արցախի ազատանէջ, ժողովուրդին, որ ամիսներէ ի վեր ապօրէն կերպով շրջափակման մէջ կը մնայ:

Հայ ժողովուրդի մեծ տօնին առիթով շնորհաւորական եւ զօրակցական ուղերձ մը ղրկած էին ԱՄՆ-ի գոնկրէսի անդամ Ատըմ Շիֆ: Գալիֆորնիոյ Խորհրդարանի անդամ Լորա Ֆրիտման եւ Կլենտէյլի քաղաքապետական Խորհուրդի անդամ Այլին Ասատուրեան, որոնք իրենց շնորհաւորական ելոյթներով, ողջունեցին հայ ժողովուրդին ազգային տօնը: Միաժամանակ գնահատանքով անդրադարձան անոնց օգտակար ձեռքբերումներուն եւ ներդրումներուն, մաղթելով խաղաղութիւն եւ նորանոր յաջողութիւններ:

Օրուան յայտագրին մաս կը կազմէր գեղարուեստական ճոխ ծրագիր մը, որուն մաս կը կազմին տարբեր տարիքի մանկա-պատանեկան եւ երիտասարդական պարախումբեր: Անոնք իրենց ազգային գունագեղ տարազներով, ներդաշնակ ու հեզաճկուն պարերով, արժանացան բազմահարիւր հանդիսականներու հիացմունքին եւ բարձր գնահատանքին:

Ներկաներուն կողմէ ջերմ ընդունելութիւն գտան նաեւ հանրածանօթ երգիչ-երգչուհիներ եւ շնորհալի նուագողներ, որոնք իրենց հայրենասիրական եւ ժողովրդային երգ ու նուագով տօնական բարձր տրամադրութիւն ու ոգեւորութիւն ստեղծեցին հայրենասէր հասարակութեան մօտ:

Ուշ երեկոյեան ներկաները զբօսայդիէն հեռացան լիցքաւորուած յիշատակելի օրուան մը լաւագոյն տպաւորութիւններով:

Այս առթիւ կը գնահատենք սոյն փայլուն միջոցառումը նախաձեռնողները, որոնք ձեռնհասօրէն կատարեցին իրենց վիճակուած պարտականութիւնները:

Վարձքերնիդ կատար:

Massis Weekly

Volume 43, No. 35 **Saturday, September 16, 2023**

Azerbaijan Launches Major Military Attack on Karabakh 27 Killed, More Than 200 Injured Including Civilians

STEPANAKERT — Heavy explosions were reported from Stepanakert and other parts of Nagorno-Karabakh on Tuesday as Azerbaijan announced a large-scale military operation against the REpublic.

The Azerbaijani Defense Ministry said that its troops are taking "counterterrorism measures" against Karabakh Armenian forces in order to restore the Azerbaijani "constitutional order" in Karabakh.

"On September 19, at around 1 p.m., the Azerbaijani armed forces violated the ceasefire along the entire Line of Contact by launching rocket artillery attacks," read a statement released by Karabakh's Defense Army. It said its units are putting up "stiff resistance" to Azerbaijani attempts to advance into Karabakh.

"The sound of explosions can be heard in Stepanakert right now," a local journalist, Marut Vanian, told RFE/RL's Armenian Service. "Screaming children, their parents went down to basements for cover."

"Heavy artillery is working nonstop," he said.

Karabakh officials confirmed the shelling. The office of the local human rights ombudsman said that at least 27 people, including7 seven civilians, were killed and 200 others wounded.

Six villages near the frontlines have already been evacuated.

"The whole Stepanakert is shelled from all directions," said Metakse Hakobyan, a local parliamentarian. "Parents and children have lost each other. The situation is terrible. People have no fuel to look for their kids."

Baku claimed earlier in the day that six Azerbaijanis were killed in an Azerbaijani-controlled part of Karabakh after hitting landmines planted by Karabakh forces. It did not identify the victims. The authorities in Stepanakert strongly denied the claims.

Shortly afterwards, fighting reportedly broke out in Karabakh's eastern Askeran district, with the Karabakh army saying that Azerbaijani troops opened mortar fire at its positions in the area.

Russia's peacekeeping contingent in Karabakh did not immediately react to what appeared to be the worst fighting in and around Karabakh since the 2020 Armenian-Azerbaijani war stopped by a Russian-brokered ceasefire. Baku said that it informed the peacekeepers about its offensive.

Russian Foreign Ministry spokesman Maria Zakharova said Moscow is in touch with the conflicting sides and is urging them to stop the fighting. She also said the peacekeepers are continuing to do their job.

The European Union expressed serious concern about the dramatic escalation through its special envoy to

Continued on page 4

UN Security Council to Convene Meeting on Nagorno-Karabakh on September 21

YEREVAN — Armenian Prime Minister Nikol Pashinyan discussed in a telephone conversation with French President Emmanuel Macron the situation in Nagorno-Karabakh after Azerbaijan's attack.

Both sides emphasized the inadmissibility of the use of force and stressed the need to use international de-escalation mechanisms.

Macron said that France will initiate an urgent meeting of the UN Security Council in connection with the situation in Karabakh. It will convene on September 21.

"France calls on Azerbaijan to immediately cease its offensive and to respect international law. It will hold Azerbaijan solely responsible for the fate of the civilian populations of Nagorno-Karabakh." The country's Foreign Ministry said in a statement.

SDHP Central Committee Statement



The Central Committee of the SD Hunchakian Party strongly condemns the military actions unleashed by Azerbaijan against the peaceful population of the Republic of Artsakh. Aliyev's dictatorial regime aims to complete the depopulation and occupation of Artsakh, which was left unfinished after the 44-day war.

It is also evident that the Russian peacekeeping forces, which are called to ensure the safety and security of the Artsakh Armenians, once again show their complete inability and powerlessness to stop the Azeri attack, trying to place the responsibility of the created situation on others. We consider Russia's behavior unacceptable and call on Moscow to fulfill its obligations assumed by the agreements of November 9th, 2020.

On the other hand, we call on the international community and the UN Security Council in particular to reject the ineffective condemnations and to immediately impose sanctions to stop the far-reaching ambitions of Azerbaijan.

At this fateful moment, when we are all filled with anger and frustration, it is more than important to be united and maintain internal peace. In addition, we call on our compatriots not to give in to provocations and reckless steps, which, apart from causing internal instability and draining our resources, will contribute nothing to the resolution of the situation.

SD Hunchakian Party Central Committee
September 19, 2023

Newly Appointed Consul General of the Republic of Armenia Karen Israyelyan Visited SDHP Center

PASADENA – On Wednesday evening, the Consul General of the Republic of Armenia in Los Angeles, Dr. Karen Israyelyan, and consulate advisor Karen Hovannisyan, met with the leadership of the Social Democrat Hunchakian Party. During a series of meetings to mark his assumption of office, Dr. Israyelyan visited the SDHP headquarters in Pasadena where he was warmly received by the members of the Party's Central Committee and the Western USA Executive Committee.

At the outset of the meeting, Executive Committee Chairman Vasken Khodanian extended a warm welcome and congratulated Dr. Israyelyan on his appointment to one of the most significant diasporan communities around the world. Chairman Khodanian pledged the Party's unwavering support and cooperation with the Consulate to benefit the Motherland and strengthen Armenia-Diaspora ties.

Alongside his significant academic background in Oriental Studies, Dr. Israyelyan is a seasoned diplomat who served the Foreign Ministry in critical roles such as the Deputy Chief of Mission to the European Union and the Head of the NATO division. Dr. Israyelyan expressed his gratitude and deeply valued the constructive stance of the SDHP toward Armenia.

Dr. Hambik Sarafian, Chairman

Continued on page 4

PM Pashinyan's Interview With POLITICO: We Cannot Rely on Russia to Protect Us Anymore

YEREVAN — The Russian peacekeepers in Nagorno-Karabakh have failed their mission, Armenian Prime Minister Nikol Pashinyan told POLITICO in an interview.

"As a result of the events in Ukraine, the capabilities of Russia have changed," Pashinyan said, acknowledging that Moscow was seeking to avoid alienating Azerbaijan and its close ally Turkey.

"Our strategy should be to try in this situation to maximally decrease our dependency on others," he added. "We want to have an independent country, a sovereign country, but we have to have ways to avoid ending up in the center of clashes between West and East, North and South … There cannot be a case when Armenia becomes a 'proxy.' This is not permissible."

He said that Armenia can no longer rely on Moscow as a guarantor of its security, even as fears grow of a return to open conflict with Azerbaijan.

Calling on the big protector — Russia in Armenia's case — each time conflict flared was simply unsustainable, Pashinyan said.

"The model by which we have problems with our neighbors and we have to invite others to protect us — it doesn't matter who these others are — is a very vulnerable model."

"The security situation has changed acutely with violations along the line of contact and invasion into the territory of Nagorno-Karabakh," Pashinyan said, accusing Azerbaijan of creating a humanitarian crisis by closing the Lachin Corridor — the only highway linking Nagorno-Karabakh to Armenia, which Russia's troops were tasked with guarding under the terms of the 2020 ceasefire. "All of this … was supposed to be in the sphere of responsibility of Russian peacekeepers and as far as these issues exist, the Russian peacekeepers have failed in their mission," he said.

Still, he added a caveat: "I can't say though that if the Russian peacekeepers hadn't been in Nagorno-Karabakh, the situation would now be better."

The prime minister reiterated his support for talks, brokered by the U.S., EU and Russia, in an effort to deliver a peace agreement after decades of conflict with Azerbaijan.

"If we want to have lasting, eternal statehood, first of all we have to take very serious steps and invest very serious efforts to settle our relations with our neighbors," the PM said.

At the same time as acknowledging the need to break reliance on the old ally in Russia, Pashinyan admitted there was a long way to go before Western countries could be seen as offering the full support Armenia needs.

"Our partners, the EU and the United States are also supporting us when it comes to democratic reforms agenda," he said, before adding: "I cannot say that the support and the help that we are receiving is sufficient to serve our objectives and our agendas."

Pashinyan said it was now up to the international community to ensure ethnic cleansing does not take place in Nagorno-Karabakh.

Erdogan Offers to Hold Armenia-Turkey-Russia-Azerbaijan Summit on Karabakh

ANKARA — Turkish President Recep Tayyip Erdogan has revealed that he has offered Armenia, Russia and Azerbaijan to hold a quadripartite summit on the Nagorno-Karabakh conflict, TASS reports.

"We conveyed our proposal for a trilateral meeting under our leadership to them (Azerbaijan and Armenia). Beyond the trilateral approach, we also made a quadrilateral proposal," Erdogan said at a news conference in Istanbul on Saturday ahead of his departure for next week's UN General Assembly meeting in New York.

"There has been no response yet," he said of the four-way proposal, noting that he would discuss the matter with his Azerbaijani counterpart Ilham Aliyev.

U.S. Generals Attend "Eagle Partner 2023" Joint Military Exercise in Armenia

YEREVAN—Major General Gregory Anderson, the commander of the U.S. Army's 10th Mountain Division, and Brigadier General Patrick Ellis, a deputy chief of staff of the U.S. troops in Europe, joined Armenia's Defense Minister, Suren Papikyan, and the General Staff of the RA Armed Forces, Lieutenant General Edward Asryan, on Friday in visiting one of the two training grounds where 85 U.S. and 175 Armenian soldiers are participating in the Eagle Partner 2023 exercise.

"The U.S. Embassy in Yerevan quoted Anderson as saying in a statement, "Our ties with Armenia are multifaceted and cooperative. The U.S. has consistently extended military assistance to Armenia, especially in bolstering the nation's capabilities in crucial areas such as nonproliferation and peacekeeping."

U.S. Ambassador Kristina Kvien, for her part, described the 10-day drills as a "testament to our longstanding partnership with Armenia and builds upon decades of successful peacekeeping and security cooperation, underpinned by Armenia's enduring relationship with the Kansas National Guard under the Department of Defense's State Partnership Program," she said.

The head of the Defense Agency and the guests were introduced to the control center of the military training, the re-equipped classrooms where plans are developed, and decisions are made.

At the end of the visit, the Commander of the Peacekeeping brigade provided information on the involvement of the peacekeeping contingent of the Armenian Armed Forces in conducting peacekeeping missions in a number of countries, emphasizing that cooperation with the peacekeepers of the U.S. Army in those territories is at a high level.

The goal of the September 11-20 exercise is to prepare the Armenian 12th Peacekeeping Brigade for a NATO Operational Capabilities Concept (OCC) evaluation under the NATO Partnership for Peace program later this year.

Ruling Party Loses Its Majority in Yerevan's Municipal Elections



YEREVAN — Prime Minister Nikol Pashinyan's Civil Contract party lost its majority in Yerevan's municipal assembly as a result of Sunday's local elections marked by record-low turnout.

Nevertheless, it may still manage to install the next mayor of the Armenian capital with the help of another party thought to be allied to Pashinyan.

Preliminary election results showed Civil Contract doing better than all other contenders and winning roughly 33 percent of the vote. But it fell well short of an absolute majority in the Council of Elders empowered to appoint the mayor.

A party represented by Hayk Marutyan, a former Yerevan mayor ousted by Civil Contract in 2021, came in second with about 19 percent, followed by a more radical opposition group, the Mayr Hayastan (Mother Armenia) bloc, which got 15.4 percent, according to the official vote tally.

In the biggest surprise of the day, a party led by Vartan Ghukayian, a controversial video blogger based in the United States, garnered 9.7 percent and also won seats in the city council. Earlier this year, Armenian law-enforcement authorities issued an international arrest warrant for Ghukasyan and arrested his associates in Armenia on extortion charges.

Civil Contract could only have a very narrow lead over the three political forces critical of Pashinyan's government if it teams up with the pro-Western Hanrapetutyun (Republic) party. The official results gave Hanrapetutyun 11.2 percent of the vote.

The Central Election Commission (CEC) also reported that only about 28.5 percent of Yerevan's 824,250 eligible voters cast ballots on Sunday, the lowest figure ever recorded in the city.

Senators Demand Stronger U.S. Action Against Azeri Blockade of Karabakh

WASHINGTON, DC — Several members of the U.S. Senate have demanded that the administration of President Joe Biden do more to end Azerbaijan's nine-month blockade of Nagorno-Karabakh strongly condemned by them.

Robert Menendez, the chairman of the Senate Foreign Relations Committee, and other Democratic senators criticized on Thursday the administration's reluctance to impose sanctions on the Azerbaijani government during a committee hearing on the deepening humanitarian crisis in Karabakh.

"In the stores of Nagorno-Karabakh shelves are empty," Menendez said, opening the hearing. "Ambulances don't have gas. Miscarriages have nearly tripled. The BBC reports that one third of deaths there are now from malnutrition."

He accused Azerbaijani President Aliyev of seeking to "either coerce the people of Artsakh into political submission or starve them to death."

"Is it so important to us that we cozy up to someone who is in the process of creating ethnic cleansing?" added Menendez.

Testifying before the committee, a senior U.S. State Department official insisted that Washington is doing its best to get Baku to lift the blockade that has led to severe shortages of food, medicine and other basic necessities.

"The United States will not countenance any effort or action, short-term or long-term, to ethnically cleanse or commit other atrocities against the Armenian people of Nagorno-Karabakh," said Yuri Kim, the acting assistant secretary of state for Europe and Eurasia.

The senators seemed unconvinced by her assurances. One of them, Ben Cardin, said Washington's failure to take "decisive action" means that "more people are dying" in

Karabakh every day.

"I think you have to put all possible tools on the table because gentle diplomacy does not seem to be working," another senator, Chris Murphy, told Kim.

The lawmakers specifically advocated a freeze on U.S. military aid to Azerbaijan. The U.S. Congress had banned all kinds of direct assistance to Baku through Section 907 of the Freedom Support Act passed in 1992. But a decade later it allowed U.S. administrations to waive the ban on an annual basis to help Azerbaijan's military and security agencies cope with terrorist threats.

Just like his predecessors, Biden waived Section 907 in April 2021 over strong objections of the Armenian community in the United States. His most recent waiver expired in June this year.

"We have not submitted a new waiver request yet because we are reviewing the situation very carefully," Kim said in this regard.

U.S. officials and Secretary of State Antony Blinken in particular have repeatedly urged Baku to unblock the sole road connecting Karabakh to Armenia. They have at the same time backed an alternative, Azerbaijani-controlled supply line for Karabakh sought by Baku and rejected by the Karabakh Armenians.

Senators Padilla, Rubio Condemn Azerbaijan's Unwarranted Military Escalation

WASHINGTON, D.C. — Today, U.S. Senators Alex Padilla (D-Calif.) and Marco Rubio (R-Fla.) issued a joint statement condemning Azerbaijan's unprovoked and unjustified military incursion in the South Caucasus against Armenians under the false pretext of leading an 'anti-terrorist operation' and in violation of its own ceasefire obligations:

"Azerbaijan's regime is leading an unprovoked attack against Armenian civilians in Nagorno-Karabakh—a grave escalation in the steps the regime has taken to ethnically cleanse Armenians in the region. The Biden Administration, and our international allies, must forcefully condemn this military aggression and demand a peaceful resolution that puts a stop to these human rights violations. The United States should immediately halt all security assistance to Azerbaijan, as demanded under section 907 of the Freedom Support Act."

Last month, Padilla and Senate Foreign Relations Committee Chairman Bob Menendez (D-N.J.) sent a letter to United States Permanent Representative to the United Nations Linda Thomas-Greenfield, urging her to introduce a UN resolution calling for an immediate end to Azerbaijan's eight-month blockade of Nagorno-Karabakh, including allowing unrestricted humanitarian access to Armenians in Nagorno-Karabakh. Padilla, Menendez, and Rubio also introduced a bipartisan Senate resolution earlier this year condemning the government of Azerbaijan for its blockade of the Lachin Corridor and urging the United States to take immediate steps to end the ongoing humanitarian crisis.

"The Lachin Corridor Must Open Now That's Non Negotiable" Yuri Kim

WASHINGTON, DC — The Lachin corridor must be opened now, no more delay, Acting Assistant Secretary for European and Eurasian Affairs Yuri Kim said during the Senate Foreign Relations Committee hearing on the crisis in Nagorno Karabakh.

"We are deeply concerned by the continued closure of the Lachin Corridor and the impacts this closure is having on the people of Nagorno-Karabakh," said Kim. She emphasized that the State Department views the "status quo as completely unacceptable" and that they will "not stop working until we have a resolution."

"We have consistently said that that Corridor must be open to commercial, humanitarian, and private traffic," she continued. "We have conveyed that message both publicly and privately to all levels of government in Azerbaijan on numerous occasions. Access to food, medicine, baby formula, and energy should never be held hostage."

Kim stated that there should be no more delays and that it's "essential for these supplies which have been ready to move in weeks to finally be delivered to the people of Nagorno-Karabakh now."

She continued that the State Department is encouraging "all sides to work constructively" as the "only path forward is through dialogue." Kim

added: "We believe peace between Armenia and Azerbaijan would have cascading benefits for the region."

Assistant Secretary Kim also said that "we have made clear that the rights and security of ethnic Armenians in Nagorno-Karabakh must be protected. This is an essential element of any durable and dignified peace agreement."

Concluding her statement, Kim said that the US will not support any effort or action to "ethnically cleanse or commit other atrocities against the Armenian people of Nagorno-Karabakh," reiterating that the "current humanitarian situation is not acceptable."

Armenian Congressional Caucus Co-Chairs React to Unprovoked Attacks on Artsakh

WASHINGTON, D.C. — Today, Representative Adam Schiff (D-Calif.) and the Co-Chairs of the Congressional Caucus on Armenian Issues, Representatives Gus M. Bilirakis (D-Fla.), Frank Pallone, Jr. (D-N.J.), and David G. Valadao (D-Calif.), released the following joint statement in the wake of Azerbaijan's unprovoked attacks on Artsakh earlier today.

"The Congressional Caucus on Armenian Issues has warned for months that Azerbaijan was implementing a genocidal campaign against the Armenian people of Nagorno-Karabakh (Artsakh) in broad daylight. The large-scale attack by Azerbaijani forces today further escalates that campaign, taking advantage of a people they have systematically starved over the last 10 months. It is still too early to tell the full breadth and scale of this attack, but initial reports indicate that Azerbaijan is using deadly force, including heavy shelling, against residential and civilian areas in Stepanakert. According to reports, the attacks have so far resulted in at least 138 injured individuals, including 29 civilians, and 25 fatalities, including one child," said the Members.

"President Aliyev orchestrated this deliberate attack to exile the Armenian population in Artsakh. The so-called 'humanitarian corridors' they reportedly opened for civilians to use to leave the area are only meant to further perpetuate their campaign of ethnic cleansing using violence, hunger, and fear to push these people out of their homeland. Armenians have called Nagorno-Karabakh home for thousands of years. The United States should use every diplomatic tool, including sanctions, to help guarantee their right to remain there. We call on the State Department and our international partners to take immediate action to halt any further aggressions by Azerbaijani forces and ensure their safety and security," the Members continued.

Two-Day International Conference: "Microhistories in Armenian Studies" at Fresno State

FRESNO — The Fresno State Armenian Studies Program is organizing a two-day international conference, "Microhistories in Armenian Studies," taking place on Friday, September 22 and Saturday, September 23, 2023 on the Fresno State campus. The conference is supported through the Ralph Kazarian Armenian Memorial Fund.

The conference will feature keynote speaker Dr. Hans-Lukas Kieser (University of Newcastle NSW, Australia) and presentations by six scholars.

The conference will begin at 7:00PM on Friday, September 22, with the keynote speaker followed by three presentations: Victoria Abrahamyan (University of Neuchâtel, Switzerland) will speak on "The Contested Armenian Participation in the Syrian Great Revolt, 1925-1926"; Ara Sarafian (Gomidas Institute, London) will speak on "The Great Drought/Famine of Van and Kurdish Armenian Relations cir. 1880"; and Sam Dolbee (Vanderbilt University) will speak on "Hovhannes Doumanian and the Last Ottoman Agronomists." The first day's session will take place in the University Business Center, Alice Peters Auditorium, Fresno State. Admission to the conference is free and parking in Lot P6 or P5 is free as well.

The second day of the conference will begin at 10:00AM on Saturday, September 23 with three presentations: Robert Sukiasyan (Yerevan State University and American University of Armenia) speaking on "A Scheme for Extortion and Targeted Eliminations of Surviving Sivas Armenian Community Leaders in the Summer of 1915"; Ümit Kurt (University of Newcastle NSW) speaking on "The Fate of Armenian Family Wealth: Confiscation of Property in Ottoman Aintab during the First World War"; and Hazal Özdemir (Northwestern University) speaking on "They Vowed to Never Return: Bureaucratic Violence and Border-Building in the Ottoman Empire." The second day's session will take place in the Smittcamp Alumni House, 2625 E. Matoian Way, Fresno State. Admission to the second session is free and parking across from the Smittcamp Alumni House is free as well.

The conference will also be live-streamed on YouTube at: https://bit.ly/armenianstudiesyoutube.

For information about upcoming Armenian Studies Program presentations, please follow us on our Facebook page, @ArmenianStudiesFresnoState or at the Program website, https://fresnostate.edu/armenianstudies.

Azerbaijan Launches Major Military Attack

Continued from page 1

the South Caucasus, Toivo Klaar.

"Military actions of Azerbaijan must be stopped immediately to allow for a genuine dialogue between Baku and Karabakh Armenians," EU Council President Charles Michel said later in the day.

Meanwhile, the Azerbaijani Foreign Ministry insisted on the "complete withdrawal of the Armenian armed forces" from Karabakh. Armenia's Defense Ministry again strongly denied having any troops there.

Meanwhile, protests broke out in downtown Yerevan Tuesday evening in front of Armenian government buildings, the Russian embassy, and the prime minister's residence, with hundreds of demonstrators demanding that Prime Minister Nikol Pashinyan resign and that Russia respond to Azerbaijan's attack.

Protesters reportedly clashed with police officers posted to government buildings and blocked the entrances and exits to the Russian embassy. CivilNet's team on the ground reported law enforcement used stun grenades on the protesters in at least one case.

For his part, Prime Minister Nikol Pashinyan said Tuesday Armenia will continue to press Azerbaijan to "ensure the rights and security of Nagorno-Karabakh's people," but insisted Yerevan will not intervene militarily, saying, "Attempts to engage Armenia in this military escalation are unacceptable."

Azerbaijan's attack comes after Nagorno-Karabakh endured more than nine months of near-total isolation from the outside world. Azerbaijan's blockade has pushed Nagorno-Karabakh's roughly 120,000 Armenians to the brink of famine and prompted warnings of genocide from the former chief prosecutor at the International Criminal Court.

Armenia Inaugurates First Floating Photovoltaics in the Region

YEREVAN (ARMENPRESS) — The first floating solar photovoltaic (FPV) system in the region was inaugurated on September 13 on Lake Yerevan in the Armenian capital.

The test variant has a capacity of 150 KW.

The project was developed by the Armenia Renewable Resources and Energy Efficiency Fund and the French NEPSEN and as a result the 800,000 euro grant was approved by the French government.

Armenia Renewable Resources and Energy Efficiency Fund Chairman of the Board of Trustees, Deputy Mayor of Yerevan Tigran Avinyan hailed the station as 'unique.'

"We've been developing solar energy with small steps since 2018 and I think that over time these steps became more and more bigger, and we significantly surpassed our own strategy. Hundreds of solar power stations are already functioning in Armenia and we have an agreement on building a 200 MW solar power station with Masdar," Avinyan said at the inauguration of the floating photovoltaics.

Avinyan said that Yerevan is getting ready to entirely switch to the consumption of green energy.

French Ambassador to Armenia Olivier Decottignies was also in attendance at the opening ceremony.

"This project contributes to Armenia's energy transformation, Armenia's energy independence. The project also marks the success of the Armenian-French cooperation," he said, expressing certainty that success will be achieved through joint work. "And this is just the beginning," he added.

An Environmental and Social Impact Assessment (ESIA) has been conducted in the area and it found that no significant impacts will emerge during the construction and operation of the station.

The station was built by Optimum Energy, who had won a tender for the construction.

Newly Appointed Consul General

Continued from page 1

of the Central Committee of the SDHP, outlined the party's principled positions on Armenia's domestic and foreign policies. Dr. Sarafian stressed the significance of working in unison, especially at a time of existential threat to Armenia's sovereignty and the ongoing Azerbaijani campaign of ethnic cleansing in the Republic of Artsakh.

The meeting concluded with a reception at the AEBU Center's banquet hall where the leadership of SDHP's sister organizations had an opportunity to pose their own questions and concerns to the Consul General. The organizations present included the Armenian Council of America, Gaidz Youth Organization, Nor Serount Cultural Association, Armenian Educational Benevolent Union, Armenian Athletic Association, Women's Union, and the Compatriotic Committee. Dr. Israyelyan acknowledged and commended the significant presence of a large swath of LA's Armenian-American leadership. The evening concluded with well wishes for Dr. Israyelyan's tenure, the SDHP's cooperation with the Consulate and its commitment to a bright future for Armenia and Artsakh.

Մշակոյթի Տօնի Առիթով Աչքի Լոյսի Պէս Պահել Մեր Լեզուն Եւ Գիրն Ու Գրականութիւնը

Ռ. ԿՈՐԻՒՆ

Տօնները ոգեշունչ առիթ են հանդիսանում, նրանցից մէկն է Սրբոց Թարգմանչաց տօնը, ինչպէս նաեւ ընդունուած է կոչել՝ Հայոց Մշակոյթի Տօն-Հոկտեմբեր ամսում:

Հոկտեմբերը աշնան ամիս է համարւում, դեղնաթոյր ու կարմրաթոյր ծառատերեւներով, շատերի համար գեղեցիկ ներշնչող գոյներ ու տեսադաշտ, իսկ ուրիշների համար թախիծ ու մելancոտութիւն խորհրդանշող, յամենայնդէպս հոկտեմբերը ոսկեհուր ամիս է:

Արդարեւ մեր Թեհրանում եղած ժամանակ Հոկտեմբերը ուրիշ համ ու հոտ ունէր: Ճոխ հանդիսութիւն էր կազմակերպւում Առաջնորդարանի կողմից թէ լուսահոգի Արտակ սրբազանի օրօք եւ ներկայ թեմակալ Սեպուհ սրբազանի ժամանակ: Հրաւիրւում էին ուսուցիչներ, գրողներ, ծնողական խորհուրդներ, մտաւորականներ, ազգային-հասարակական գործիչներ, միով բանիւ՝ թեհրանահայ սերունդը, »Արարատ« մարզաւանի մեծ դահլիճը բազմամարդ շունչ ու ոգի էր առնում: Գնահատւում եւ պարգեւադրւում էին հանգստի կոչուած ուսուցիչները, արտասանւում էին տօնը բնութագրող խօսքեր, տեղի էր ունենում բարձր գեղարուեստական ծրագիր, վերջում՝ համադամ կերակուրներով հիւրասիրութիւն, առանձին օրեր գրքերի ցուցահանդէս, որը Սեպուհ սրբազանը հիմք դրեց 2000 թուականին շարունակուելով ամէն տարի: Այսպէս Հոկտեմբերը իրանահայ կեանքում դառնում է նախշուն ծառ՝ նռան ծաղիկներով զարդարուած: Սակայն մեր մօտ Լոս Անջելէսում չի նկատւում այդ աշխուժութիւնը, մեծամասնութեամբ ընտանիքներ չեն իմանում ինչ է Հոկտեմբեր ամիսը եւ մեր գեղածիծաղ լեզուն թողած ուրիշ լեզուով են բարբառում, անգիտանալով մայրական լեզուով խօսելն է հաճելի, քաղցր ?? ?????:

Հոկտեմբերը մեր եռամեծար Վարդապետների յիշատակման, մեզ յաւերժացնող տառերի եւ դպրութեան տօնն է: Հոկտեմբերը մեր հայ մշակոյթի ծառը զարդարող երախտաշատ գրողների, կրթական գործիչների եւ մշակների տօնն է: Հոկտեմբերը մշակոյթի զանգերը հնչեցնելու, խնկի եւ աղօթքի, գովասանքի ու գնահատանքի տօնն է:

Մեր աղօթքն է բարձրանում առ Աստուած մեր արարիչ, թարգմանիչ ու կազմակերպիչ Վարդապետների հոգու հաճութեան համար: Այր մի Մեսրոպ Մաշտոց, հովուապետ եւ կաթողիկոս Սահակ Պարթեւ, Վռամշապուհ Արշակունի Արքայ եւ Թարգմանիչ Վարդապետներ, որոնք իրենց աստիճանական դիրքով ու կարգով կառուցեցին հայոց մշակոյթի բերդը:

Ինչո՞ւ այս փառապանծ յիշատակումը, պատճառը արեւի պէս յստակ է, եթէ այդ տառերը Ս. Մեսրոպ Մաշտոցի միջոցաւ չյառնէին, Աստուածաշնչեան »Թագուհի թարգմանութիւնը« չկատարուէր եւ ինքնուրոյն մշակոյթի հիմքը չդրուէր »Ոսկեդարեան« վիթխարի աշխատանքներով, վաղուց հայն ու Հայաստանը պատմութեան էջերում պիտի որոնէինք:

Հինգերորդ դարի մշակութային ձեռք բերումները մեր գոյութեան խարիսխը խորապէս ամրապնդեցին յորձանուտների եւ կործանիչ հողմերի դէմ-յանդիման: Որեւէ մի գործ ինքնաբերաբար չի լինում, անձնուրացներն ու ինքնամոռացներն են, որ իրենց սխրանքներով ու զոհողութիւններով ազգի փրկութեան եւ յաւերժութեան ճամբան գծում եւ ճակատագիր են տնօրինում, ինչպէս 1991-1994 թ.թ. (Արցախի ազատագրման մարտիկները արեցին, սակայն ցաւօք յետագային եկած իշխանութիւնները ազգային շահերը եւ հայրենիքի անվտանգութեան անհրաժեշտ հիմքերը աչքաթող անելով մատնուեցինք մի պուճուր Արցախի շրջապատուած վիճակին):

Դարեր եկան ու անցան, մեր ժողովուրդն ու երկիրը շատ արհաւիրքներ տեսաւ, թիրախ դարձաւ հայութեան գոյութիւնը կոտորածներով, նախճիրներով եւ տեղահանութիւններով, սա-կայն թշնամիների այդ բոլոր անմարդկային արարքները՝ հալա-ծանքներն եւ կոտորածները ի զօրու չեղան մեզ արմատախիլ անել, քանզի 5-րդ դարի կեանքի փիլիսոփայական ուսմունքն ու դրուածքը խորախորհուրդ արեան գոյն էր ստացել, ոգի եւ շունչ էր դարձել, հայը նիւթականից վեր էր դասել հոգեկան եւ բարոյական, արժէքները եւ ազգի ու հայրենիքի գոյութիւնը, որին մինչեւ օրս էլ մնացել է հաւատարիմ եւ որի հետեւանքով ու հասկացողութեամբ մնաց յաւերժի երթով, իսկ բազում թշնամիներ եկան ու անցան հողմերի պէս, անշուշտ դեռ կան այդ թշնամիներից, որոնք եաթաղանի ուժով եւ խափկանքով են գոյատեւել այլոց հողերի վրայ կառուցելով իրենց որջը:

Հպարտանում ենք մեր անցեալի մշակոյթի տարբեր բնագաւառների ձեռք բերումներով, իրաւունք ունենք, սակայն միայն հպարտանալ ձեռնածալ այս սրընթաց զարգացող ժամանակներում մեզ շատ ազգերից ետ կը պահի, հոգեպէս կը ճնշուենք, կը խեղճանանք օտարների մօտ եւ այլասերումն ու ուծացումը կ'արագացնի մեր սերունդների հայօրէն գոյատեւման:

Հայրենի իշխանաւորները մեծ պարտականութիւն ունեն հայ մշակոյթի պահպանման, զարգացման եւ լեզուի անաղարտութեան՝ օտար բառերից եւ դարձուածքներից խուսափելով, որպէսզի կուլ չգնանք համաշխարհային այս գլոպալիզացիայի քաղաքականութեան կապանքներին: Մեր յոյսը ազգասէր եւ հայրենասէր խոնարհ գործիչներն են, ոչ թէ օտարամէտ նախագահներն ու ղեկավարները, որոնց պատճառով այս տարտղնուած, բզկտուած հայրենիք, ցեղասպանութեան ենթարկուած եւ շատ ու շատ կորուստների վիճակում գտնուելով: ՄԱԿ-ի ամբիոն է յատկացուել, կարիք էր ցեղասպանութեան եւ հողերի պահանջատէր լինել, Արցախի եւ ազատագրուած տարածքների հայկականութիւնը բարձրաձայնել եւ շեշտել, ոչ թէ հաճոյանալ ուրիշներին, այդ ու-

Շար.ը էջ 14

Հայն Ու Իր Մտաւորականը

ԳԷՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ

Շատ հաւանաբար, ինծի նման շատեր, յաճախ զարմացած, իրենք իրենց հարց տուած են, թէ մեր ներկայ սովորական կեանքէն ներս, երբ ամէն տեղ եւ ամէն տեսակի պայմաններու տակ, նորութիւններ եւ անակնկալ փոփոխութիւններ ակամայ մեզ դիմաւորած ու մեզ հիմնովին շշմեցուցած, շփոթանքի մատնած եւ կամ ալ ապշեցուցած են, յանկարծ մեր ազգային կեանքի հրապարակին վրայ մեծ բացակայ մը նշմարած ենք: Խումբ մը մարդոց, ազնիւ հոյլի մը զգալի բացակայութիւնը, որուն մտաւորականութիւն կ'անուանենք:

Ո՞վ է այս մտաւորական ըսուածը.- տակաւին շարունակելով մեր պրպտումներու աշխարհը, դարձեալ մենք մեզի հարց տուած ենք եւ աւելցուցած՝ թէ ի՞նչ է իրեն սահմանուած եւ կամ վստահուած դերը մեր կեանքին մէջ եւ իբրեւ պատասխան ունեցած ենք մեր դէմքին վրայ անորոշութեան խորհրդանիշը ցուցաբերող սովորական արտայայտութիւնը:

Եւ տակաւին, չեմ յիշեր, որ նոյնիսկ օր մը, մեր առօրեայ մտահոգութիւններուն եւ կամ զանազան ժողովներուն օրակարգի նիւթ դարձուցած ըլլանք նոյնինքն մեր այդ մտաւորականը:

Բոլորս ալ լաւատեղեակ ենք, թէ մտաւորական ըսուած համեստ մարդը, իր օրապահիկը ապահովող պարզ արհեստաւոր մը չէ: Այսպէս,անկիւն մը քաշուած ան միշտ կը մտածէ, ազգին զանազան հարցերով մտահոգուած մարդ մըն է: Միշտ կը գրէ եւ հազուադէպօրէն իրեն առիթ կը տրուի «բան մը» ըսելու՝ կը խօսի: Մտածող միտք մը ըլլալով հանդերձ, լաւ դիտող մըն ալ է, որ ունի իր անձնական հաստատ համոզումն ու տեսակէտը, որ իր իւրայատուկ ձեւով դատելու առաքելութեամբ մը օժտուած, սովորական եւ ընթացիկ եզրակացութենէն վեր եւ տարբեր մօտեցումով ու անկնոցով կ'արտայայտուի ու կը բացայայտէ ամէն հարց: Ան ինքզինքին նման իրաւունքներու տէրը դարձուցած կամ շնորհած անձ մըն ալ է, որուն ամէնօրեայ ներկայութիւնը կը փնտռենք յուսահատօրէն:

Ահա այս է մեր մտաւորականին անձագիրը:

Անկասկած, որ նորութիւն մը ըսած չենք ըլլար, երբ աւելցնենք, թէ միեւնոյն մարդուն հանդէպ մենք ունեցած ենք որոշ չափով անտեսում: Զինք մերժած ենք: Շատ յաճախ զինք չենք հանդուրժած: Նոյնիսկ՝ բախտաւոր եւ լաւագոյն պարագային, վերապահութեամբ մօտեցած ենք անոր ու կարգ մը տեղեր՝ իր ներկայութինը չհանդուրժելով, մեր անտարբերութեան մոլուցքէն թելադրուած, զինք բացարձակապէս մերժած եւ նոյնիսկ յաճախ ալ բացայայտօրէն զինք հալածած: Եւ թերեւս ալ մեր այս բոլոր արարքներուն իբրեւ հարազատ արդիւնք՝ ընկերային կամ ազգային մեր կեանքը, եթէ ոչ միշտ,երբեմն մնացած է նոյն տեղը եւ որոշ տեղեր՝ տեղքայլէն աւելի՝ նահանջած ալ է:

Անոր համար է, որ կը կրկնենք, թէ մտաւորականի խօսքը, իր մատնանշումներն ու թելադրանքները եւ նոյնիսկ իր քննադատութիւնները, թէ՛ կշիռք են եւ թէ՛ ձեւով մը մեր կեանքին նորութիւն բերող, նոր աւիշ եւ ուժականութիւն տուող ու ներշնչող ազդակներ: Անոր հաստատ կարծիքը իր բարերար դերը ունեցած է մեր ազգային կեանքին մէջ:

Արդ, եթէ իսկապէս կը հաւատանք այս բոլորին, ուրեմն պարտաւոր ենք տուն-տեղ տալ անոր, յարգել անոր հրամցուցած տեսակէտներն ու մօտեցումները, ցուցմունք-ներն ու թելադրանքները: Պարզապէս զինք լսել: Հրապարակ բերել: Դուրս բերել մեր սահմանած իր մենութենէն: Թո՛ղ, ան ինքն իր մէջ քաշուած սաղմէն ու պատեանէն դուրս գայ ու կրկին անգամ մեր մտքերուն ու գործերուն առողջ ու նոր առաջնորդը դառնայ: Թո՛ղ, իր քննադատող եւ նոյնիսկ ծայրայեղ խօսքերով կատարած մատնանշումներով մեզ զգաստութեան հրաւիրէ: Թո՛ղ պոռա, թո՛ղ աղմկէ: Իր կարծիքը տայ: Թող բացականչէ: Հայրենի եւ սփիւռքեան մեր մտաւոր հրապարակները, թո՛ղ կրկին անգամ իր ձայնով, իր ներկայութեամբ լեցուի, փայլի, խանդավառուի, ճոխանայ, հարստանայ, սրբագրէ, յանդիմանէ եւ գնահատէ:

Թո՛ղ... ու... թո՛ղ . . .:

Այս բոլորով հանդերձ, մեր մօտ, մեր հայ իրականութեան մէջ բացայայտ է, թէ երբ մէկու մը եւ յատկապէս մտաւորականի մը կողմէ կարծիքի տարբերութիւն մը կը մատնանշուի, անմիջապէս այս քննադատութիւն ըսուածը կը վերածուի, կը վերափոխուի եւ կամ կը մեկնաբանուի թշնամանքով, ընդդիմութեամբ եւ ասոր իբրեւ արդիւնք արտայայտողը կը նկատուի մեզի հակառակորդ տարր:

Մեր ընտանիքներէն ու հարազատներէն սկսած, մինչեւ մեր միութենական կամ կազմակերպական կեանքէն ներս եւ նոյնիսկ մեր պետութեան մօտ, այս բոլորը բացայայտ, ցաւալի ու նոյնիսկ ողբալի իրականութիւններ են: Որովհետեւ բոլորս ալ կը խրտչինք քննադատութիւն ըսուած ճիւաղէն, կը սարսափինք անոր ներկայութենէն: Զայն մեր իրաւունքներուն մեծագոյն եւ գերագոյն թշնամին կը համարենք:

Ներկայիս մեր ժողովական կեանքին մէջ տեսանելի են մեր մարդուժի եւ նիւթականի թիւերու հետզհետէ նօսրացումն ու յաճախ փոշիացումը, որոնք հարազատ թերեւս հաստատ եւ արդիւնք են շինիչ քննադատութիւն կոչուած այս «սարսափ» ազդողի բացակայութեան: Մեր մտաւորականութեան բացակայութեան: Ճիշդ է: Այս մէկը ամէն տեղ է: Մեր մտաւորականը չի խօսիր. կամ շատ քիչ անգամ՝ երբ իրեն առիթ կը տրուի կ'արտայայտուի: Մենք զինք ամէն ձեւով մեկուսացուցած ենք: Զենք ուզած զինք լսել: Իր յարգը չենք գիտցած: Վշտացած ենք իր բառերէն, խուսափած՝ իր ներկայութենէն, վախցած՝ իր խօսքերէն եւ մեկնաբանութիւններէն:

Ուրեմն, մեր իսկ ստեղծած պայմաններուն պատճառով մեր մտաւորականը քաշուած է հայկական հրապարակէն ու առանձինը կ'ապրի: Ո՛չ տեսակէտ կ'արտայայտէ, ո՛չ ալ մենք իրեն կը մօտենանք իր կարծիքէն օգտուելու համար: Հայ ներկայ մտաւորականը կարծես դադրած է խօսելէ: Օրինակները՝ այս առթիւ, անպակաս են:

Այս բոլորը անոր համար, որ մենք, ընդհանրապէս գոհ ենք մեր ներկայ այս վիճակէն, մեր ազգային կեանքին ներկայ այս հանդարտ մակընթացութենէն եւ տեղատուու-

Շար.ը էջ 14

«Այս Դպրոցը Կրկին Պիտի Բանաք»...

ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆ

Նիկոսիա, Կիպրոս: Օգոստոս ամսուան կիրակի օրերէն մէկն էր: Եղանակը՝ շատ տաք՝ Կիպրոսի մէջ ամրան տօթէն փախչելու համար անհրաժեշտ է կա՛մ ծով ուղղուիլ, կա՛մ ալ՝ գիւղական շրջանները, որպէսզի զովանաս: Կիպրոսի գիւղերը նոյնքան գեղեցիկ են, որքան՝ ծովեզերեայ շրջանները: Եթէ այս երկու կարելիութիւններէն մէկուն չընդառաջես, երեւի այդ պարագային պէտք է մտածել այլ ելքի մը մասին: Արտան՝ կողակիցս, եւ ես այդ կիրակի օրը ընտրեցինք սրճարան մը, ինչպէս վարժ ենք կոչել՝ «Քոֆի շափ» մը, որ լաւապէս զովացուած կ՛ըլլայ:

Այսպիսի սրճարանները ներկայ օրերու մշակոյթ-կենցաղի վերածուած են: Անոնք ամէն տեղ են, եւ անոնց կրնաս հանդիպիլ իւրաքանչիւր քայլափոխի: Եթէ անիկա սուրճի սիրահարներու տեղն է, բայց նոյնքան նաեւ՝ հանդիպումի եւ հաւաքի վայր մը, ուր կրնաս բարեկամներու հետ ժամեր անցընել՝ առանց ձանձրանալու: Եւ երեւի անոնք այլ տեղերէ ա՛լ աւելի մատչելի են նիւթական իմաստով...

Նիկոսիոյ այս սրճարանին մէկ անկիւնը նստած՝ Արտան եւ ես կը սպասէինք մեր սուրճի մատակարարումին: Արտան համալսարանի դասախօս է, եւ ինչպէս ոեւէ ակադեմական գործիչ՝ ինքն ալ ունի քննական միտք եւ հարցում ուղղելու յատուկ կարողութիւն: Այս բոլորին վրայ կու գայ աւելնալու խօսակցութեան միջոցով բարեկամութիւններ հաստատելու Արտային յատկութիւնը:

Մեր մօտ նստած էին երեք տարեցներ, որոնք շատ հաճելի խօսակցութեան բռնուած էին: Եւ չուշացան Արտայի քննական միտքն ու պրպտումները: «Այս երեք մարդիկը ինչո՞ւ միանակ եկած են», հարցուց Արտան ինծի: «Ո՞ւր են անոնց կողակիցները, երբ այսօր կիրակի է»:

Կրցայ գուշակել գալիքը, բայց շատ արագ ընդմիջեցի Արտային հետաքրքրութիւնները: «Ըլլայ բան մը ըսես իրենց, ամօթ է...», եղաւ իմ կարճ եւ քիչ մըն ալ կտրուկ պատասխան-պատուէրս:

Երբ իմ տեղէս ելայ, որպէսզի կարենամ պատրաստուած սուրճերը բերել մեր սեղանը, արդէն վերադարձին տեսայ, որ «բանը բանէն» անցած էր: Արտան սկսած էր շատ հաճելի խօսակցութիւն մը՝ այս երեք տարեց կիպրացիներուն հետ: Տեսայ նաեւ, որ անոնք ալ սիրով ընդառաջած էին Արտայի հետաքրքիր, բայց նոյնքան բարեկամական հաղորդակցութեան:

Եւ պարզուեցաւ, թէ ինչո՛ւ այս երեք տարեց բարեկամները միանակ եկած էին...

Մէկուն կողակիցը մահացած էր, միւսինը հիւանդ էր, իսկ երրորդը՝ճամբորդած: Եւ կիրակի կէսօրէ ետք երեք տարեց բարեկամները եկած էին սուրճի մը շուրջ իրենց բարեկամութիւնը դարձեալ ջերմացնելու՝ կլիմայէն ջերմութեան հետ հաճելի ժամանակ մը անցընելու համար:

Անդրէասը, ըստ երեւոյթին, երեքին մէջ ամէնէն լեզուանին եւ փորձառուն էր: Երբ ան իմացաւ, որ հայ ենք, ըսաւ. « 2013 թուականին Եւրոպական խորհուրդին կողմէ ղրկուեցայ Հայաստան՝ իբրեւ դիտորդ ստուգելու համար նախագահական ընտրութիւններու թափանցիկութիւնը եւ ճշգրտութիւնը: Շատ գեղեցիկ երկիր մը ունիք: Առիթը ունեցայ այցելելու Ս. Էջմիածին: Շատ գեղեցիկ ու հոգեպարար էր պատարագը եւ՝ մեր կիպրական եկեղեցիի արարողութեան մօտիկ»:

«Օրթոտոքս-ուղղափառ եկեղեցիներ ենք, եւ այս իմաստով նմանութիւններ կան», ըսի Անդրէասին:

Զուշացաւ հայ-կիպրական յարաբերութիւններուն մասին մեր խօսակցութիւնը, եւ թէ ինչպէ՛ս երկու ժողովուրդներ ենք՝ նոյնանման մարտահրաւէրներ եւ ճգնաժամեր ունեցող:

Կիպրոսը բարեկամ պետութիւն է Հայաստանի եւ հայ ժողովուրդին: Ասիկա շատ ակներեւ է: Կիպրոս այն քիչ պետութիւններէն է, որ միշտ ալ նեցուկ եղաւ մեզի ներկայ արցախեան հիմնահարցին մէջ: Անդրէաս եւ իր բարեկամները քաջատեղեակ էին արցախեան հիմնահարցին: «Արցախի ժողովուրդը արժանի է իր արդար իրաւունքին», ըսաւ Անդրէաս:

Երկու սեղաններու շուրջ նստած էինք եւ կը շարունակէինք մեր զրոյցը: Սեղաններուն դիմաց կար մեծ ապակի մը, ուր կրնայիր տեսնել սրճարանին դուրսի կողմերը: Իսկ դուրսը՝ սրճարանին հանդիպակաց կողմը, կ՛երեւէր Մելգոնեան կրթական հաստատութիւնը:

«Մելգոնեան կրթական հաստատութիւնը շատ կարեւոր դպրոց մըն էր ոչ միայն հայերուն, այլ նաեւ Կիպրոսի համար», ըսաւ Անդրէաս: «Ձեմ կրնար հասկնալ, թէ իբրեւ հայեր՝ ինչպէ՛ս գոցեցիք այս դպրոցը»:

Անդրէասի եւ իր բարեկամներուն հետ ունեցանք նաեւ հաճելի խօսակցութիւն՝ կրթական ոլորտին վերաբերեալ: Երեքն ալ ուսեալ եւ բանիմաց կիպրացիներ էին, որոնք կեանքին մէջ ձեռք ձգած են բաւական փորձառութիւն եւ փորձ: Անդրէաս ինծի նայեցաւ եւ մատով ցոյց տուաւ Մելգոնեան հաստատութիւնը ապակիէն անդին եւ ըսաւ.

«Այս դպրոցը կրկին պիտի բանաք»:

Պատուէ՞ր, թէ՞ մարտահրաւէր...

Հրաժեշտ առինք երեք կիպրացի բարեկամներէն, բայց նոյնքան՝ յագեցած ազգային-կրթական թէ տեղական խորքային զրոյցէ մը ետք:

Կարելի չէր չմտածել այդ կիրակի օր արծարծուած բոլոր միտքերուն մասին: Բայց մանաւանդ՝ Անդրէասի պատուէրին մասին...

Շատ բան խօսուեցաւ եւ գրուեցաւ Մելգոնեան կրթական հաստատութեան փակման եւ անոր առաքելութեան դադրեցման առնչութեամբ: Քննարկումներ, քննադատութիւններ, նեղուած ու բորբոքած տրամադրութիւններ, կեցուածքներ ու տակաւին այլ բաներ: Եթէ առաքելութիւնը կասեցուած է, բայց շէնքերը տակաւին հոն են՝ Նիկոսիոյ մուտքին: Եւ կարելի չէ, որ չտեսնեմ այս շէնքերը գէթ իւրաքանչիւր օր, երբ կը գտնուիմ Կիպրոս, նկատի ունենալով, որ իմ տունս մօտիկ է դպրոցին: Եւ փակուած շէնքերը կը խօսին... Եթէ Անդրէասի միջոցով, բայց նոյնքան նաեւ՝ իմ ներսիդիս...

«Այս դպրոցը կրկին պէտք է բանաք»:

Մելգոնեան կրթական հաստատութեան փակուելէն ետք շատ բան փոխուեցաւ մեր ազգային եւ համահայկական ու համասփիւռքեան կեանքերուն մէջ՝ քիչ մը ամէն տեղ: Դպրոցի առաքելութիւնը կասեցուած է, բայց՝ ոչ երբեք մեր ներհայկական ու համասփիւռքեան կեանքերուն տարբեր ոլորտները: Մեր կեանքերը՝ իրենց յոյզերով, յոյսերով եւ տագնապ-ընելիքներով, տակաւին շատ արագ կը փոխուին, եւ նոր իրավիճակներ կը ստեղծուին: Եւ այս բոլոր նոր իրավիճակներուն մէջ կան նոր տեսիլքներ ծանրացնող պայմանները եւ պահանջները:

Հայաստան-Արցախ մեր միասնական հայրենիքը կ՛ապրի մեծ տագնապներ: Միջին Արեւելքի կոտտացող վէրքերը շատ են: Սփիւռք(ներ)ը ունի(ն) ծանրացող եւ դժուար օրակարգեր: Օրակարգեր, որոնք մեծ են եւ կը պահանջեն ուժ ու կարողականութիւն:

Արամ Ա. վեհափառ հայրապետը, երկրորդ յաջորդական տարին ըլլալով, կը հրաւիրէ մեզ բոլորս՝ վերանայելու մեր սփիւռքեան իրականութիւնները եւ լիցքաւորելու զանոնք նոր տուեալներով՝ ի խնդիր հայապահպանումի եւ մեր կեանքերուն բարելաւումին համար: Այս իմաստով իւրաքանչիւր սփիւռքահայ գաղութ ունի իր կարեւոր պարտականութիւնը՝ վերանորոգելու ու վերանայելու իր առաքելութիւնը եւ ազգային հաստատութիւններուն ու կառոյցներուն տալու նոր սլացք: Բայց նաեւ կայ անհրաժեշտութիւնը մեր համահայկական կեանքերը համադրելու եւ բոլորը զիրար շաղկապելու՝ մէկ կողմէ սփիւռքեան իրականութիւններու, բայց նոյնքան նաեւ՝ Հայաստան, Արցախ եւ սփիւռք եռամիասնութեան ընդմէջէն: Հոս պէտք է նայիլ-վերանայիլ մեր իւրաքանչիւր միաւոր-հաստատութեան եւ անոր արժէքին, ինքնութեան, տեղին եւ դերին մէկ կողմէ նոյն գաղութի կեանքին համար, բայց նաեւ՝ համահայկական իրականութեան մէջ: Ներկայ օրերու մեր կեանքերը շատ աւելիով իրարու հետ կամրջուած են, ուր պատեհութիւններ եւ կարելիութիւններ-կարողականութիւններ կարելի է նոյնպէս ներմուծել աշխարհագրական մէկ սահմանէ միւսը:

Եւ կիպրական դիտանկիւնէն, կան ներկայ օրերու հարցումները: Եւ այս՝ մեկնելով մէկ կողմէ կիպրահայ իրականութենէն, բայց նոյնքան նաեւ՝ համահայկական վիճակէն:

Արդեօք Կիպրոսի Մելգոնեան կրթական հաստատութիւնը տակաւին իր տեղը-դիրքը ունի՞ (եւ տակաւին կրնա՞յ ունենալ) մեր համահայկական ու հայապահպանումի նոր առաքելութիւններուն մէջ: Երբ բոլորս պարտականութիւնը ունինք վերատեսութեան ենթարկելու մեր սփիւռքահայ կեանքերը տարբեր ոլորտներու ընդմէջէն կազմակերպելու ձեւերը:

Այս իմաստով, պիտի կարենա՞նք գիտական-առարկայական ու քննական մօտեցումներով եւ ազգային համապարփակ պրիսմակէն մեկնելով՝ նայելու-վերանայելու...

Թէ ճի՞շդ էր կամ սխալ, որ Մելգոնեան կրթական հաստատութիւնը փակուեցաւ...

Եթէ ճիշդ էր, մինչեւ օրս չտեսանք տակաւին զայն փոխարինող այլ նախաձեռնութիւն մը, որ պիտի գար լեցնելու մեր հայկական կեանքերու նոր պահանջները իրենց նոր տուեալներուն ընդմէջէն: Վերջապէս, հայուն կեանքը կը շարունակուի եւ ան չէ կեցած: Եւ շարունակուող կեանքը կարիքը ունի նոր տուեալներու՝ ապահովելու համար ազգային մեր կեանքերուն շարունակականութիւնը: Եթէ պիտի փակենք մէկ միաւոր, նոյնպէս պիտի կարենանք նոր նախաձեռնութիւն մը մէջտեղ բերել-փոխարինել, կամ՝ գտնել այլ միջոց մը, որ պիտի նպաստէ մեր կեանքերու կազմաւորումին՝ նոր տուեալներու ընդմէջէն:

Եթէ սխալ էր... Այս պիտի նշանակէր, որ պարտինք ընդունիլ մեր սխալը... Սխալը ընդունիլը վեհանձնութիւն է եւ ոչ երբեք՝ ամօթ: Սխալը ընդունիլը վեհանձնութիւն է, քանի որ առիթը կու տայ վերանայելու նոյնինքն սխալին, սրբագրելու զայն եւ նոր եռանդ ու լիցքաւորում տալու՝ մեկնելով մեր ազգային կեանքերուն պարտադրած նոր իրավիճակներէն: Ինչ խօսք, որ մեր ազգային կեանքին նոր իրավիճակները բազմազան են եւ բազմաթիւ... Պիտի կարենա՞նք այս վեհանձնութիւնը ցուցաբերել եւ ստեղծել նոր կեանքի գործընթաց մը, ուր Մելգոնեան կրթական հաստատութեան միջոցով կիպրական-կիպրահայ եւ համահայկական մեր կեանքերուն կարելի ըլլայ տալ նոր դրուածք՝ նոր առաքելութեան մը ընդմէջէն:

Մելգոնեան կրթական հաստատութեան առաքելութիւնը կասեցուած է, բայց շէնքերը տակաւին կանգուն են: Այս շէնքերը կը խօսին տակաւին: Եւ Անդրէասը կը պատուիրէ... «Այս դպրոցը կրկին պիտի բանաք»:

Եւ «կրկին բանալու» մէջ կայ նոր տեսիլքի իրագործումը: Նոր տեսիլքը՝ նոր իրավիճակներու մէջ: Եւ նոր իրավիճակները կերտելով է, որ հայուն պատմութիւնը պիտի դնենք շարունակական գործընթացի մէջ:

«Այս դպրոցը կրկին պիտի բանաք»:

Անդրէասին պատուէրը:

Հայուն մարտահրաւէրը:

Յովնան Արք. Տէրտէրեան Կրթաթոշակային Հիմնադրամը Նշեց իր Հիմնադրման 10-րդ Տարեդարձը

Կիրակի, 2023 թ. Սեպտեմբերի 10-ին, հեղինակաւոր Jonathan Club-ի մէջ Յովնան Արք. Տէրտէրեան կրթաթոշակային հիմնադրամը նշեց իր հիմնադրման 10-րդ տարեդարձը իւրայատուկ միջոցառումով: Այս արտակարգ միջոցառմանը ներկայ էին մօտ 200 բարերարներ, աջակիցներ եւ գործընկերներ, որոնց միջոցով հնարաւոր եղաւ ստեղծել ջերմութեամբ եւ առատաձեռնութեամբ լի աննախադեպ մի երեկոյ՝ սրտամօտ ընդունելութեամբ, նրբաճաշակ ընթրիքով, կենդանի երաժշտութեամբ եւ համապարփակ ծրագրով:

Հիւրերին նախ ուղեկցեցին մոմերով զարդարուած ֆլորենցիայի սրահ, ներկաները հնարաւորութիւն ունեցան վայելելու ձեռագործ ըմպելիքներ, դասական երաժշտութիւն եւ այս ամէնը ստեղծում էր անմիջական եւ դրական մթնոլորտ բոլորի համար:

Ձեռնարկին մասնակցում էին պատկառելի հիւրեր, պատուելի հոգեւորականներ, այդ թւում՝ Թեմական խորհուրդի Ատենապետ Տիար Վարդան Նազիրեանը իր տիկնոջ՝ Պերտա Նազիրեանի հետ, համայնքի եւ հիմնադրամի վաստակաշատ ղեկավարներ, անուանի բարերարներ, ինչպէս նաեւ հայկական դպրոցները՝ ի դէմս Ալֆրէտ եւ Մարի Յովսէփեան վարժարանի, որ վերջին տասնամեակի հաստատուն աջակիցներից է, Հայ Քոյրերի Ակադեմիան, Ամերիկայի Ամերիկեան Համալսարանը (ՀԱՀ), Շարլոթ եւ Էլիզ Մերտինեան Հայ Աւետարանական Վարժարանը, ՀԲԸՄ Մանուկեան-Տէմիրճեան վարժարանը, որոնց վարչութեան անդամները, շրջանաւարտները եւ ծնողները կազմում են հիմնադրամի նուիրատուների ամենամեծ շրջանակը: Միջոցառման է՛լ աւելի շքեղութիւն հաղորդեց «Էմմի» մրցանակի դափնեկիր հաղորդավար Արաքսյա Կարապետեանը:

Երեկոյեան ժամը 7-ի սահմաններում ներկաներին ուղեկցեցին Գլխաւոր սրահ, որտեղ մեծադիր բեմը հիւրընկալեց StArt համոյթի համաշխարհային մակարդակի երաժիշտներին, որոնք ներկաներին հիացրին հայկական, եւրոպական եւ լատինաամերիկեան ստեղծագործութիւններով ու դասական գործիքների կատարումներով:

Բացման խօսքով հանդէս եկաւ Յովնան Արք. Տէրտէրեան հիմնադրամի փոխատենապետ Տիրան Աւագեանը: Ջերմօրէն ողջունելով բոլոր ներկաներին՝ նա ասաց. «Երբ մենք նշում ենք մեր կրթաթոշակային հիմնադրամի ձեռքբերումները, մենք նաեւ նշում ենք ձեզանից իւրաքանչիւրին ձեր հաստատուն աջակցութեան եւ վստահութեան համար: Այս երեկոն մեր սրտագին երախտագիտութեան արտայայտութիւնն է ձեր առատաձեռնութեան եւ այս վեհ գործի հանդէպ հաստատակամ հաւատքի համար»:

Բացման խօսքից յետոյ օրհնութեան խօսքով հանդէս եկաւ եւ երեկոյին հոգեւոր շունչ փոխանցեց Ս. Ղեւոնդեանց Մայր եկեղեցու հոգեւոր հովիւ Արժ. Տ. Խաժակ Քհնյ. Շահբազեանը: Այնուհետեւ մատուցուեց ճոխ ընթրիք, երեկոն շարունակուեց նուիրական յիշողութիւններով ու ազնիւ մթնոլորտով:

Հիմնադրամի տնօրէնների խորհրդի Ատենապետուհի Այլին Քէոսէեանը բեմ բարձրացաւ՝ ներկաներին իր խօսքն ուղղելու համար: Յուզումնալից եւ ուրախութեամբ լեցուն նրա խօսքում համառօտ զեկոյց ներկայացուեց Յովնան Արք. Տէրտէրեան հիմնադրամի գործունէութեան մասին, որ զգալի ազդեցութիւն է ունեցել հայկական դպրոցների եւ համայնքի երիտասարդ գիտնականների վրայ: Ապշեցուցիչ բացահայտում էր, որ հիմնադրամը վերջին տասը տարիների ընթացքում աւելի քան 500,000 ԱՄՆ դոլար է յատկացուել հայկական կրթական հաստատութիւններին՝ խթանելով հայեցի կրթութիւնը, մշակոյթը եւ ինքնութիւնը ինչպէս համայնքում, այնպէս էլ Հայաստանում: Այս աջակցութիւնը առնչուել է թէ՛ ամէնօրեայ, թէ՛ շաբաթնօրեայ դպրոցներին: Ընդ որում շաբաթնօրեայ դպրոցները յատուկ տեղ են զբաղեցնում այս շարքում, քանի որ նրանք սպասարկում են ոչ հայկական ամենօրեայ դպրոցներ յաճախող աշակերտներին, ովքեր պատրաստակամօրէն իրենց շաբաթ օրերը նուիրում են մեր լեզուի, պատմութեան, կրօնի եւ մշակոյթի ուսումնասիրութեանը: Գնահատանքի խօսքեր ասուեցին դոկտոր Էլլի Անդրէասեանին՝ Արեւմտեան թեմի շաբաթօրեայ դպրոցների խորհրդում իր 12-ամեայ ղեկավարութեան համար: Առաջիկայում նախատեսւում է համախմբել Արեւմտեան եւ Արեւելեան թեմերի շաբաթօրեայ դպրոցները ընդհանուր հովանու ներքոյ, եւ այդպիսով նրանց թիւը կը հասնի 51-ի:

Ատենապետուհի Այլին Քէոսէեանը յատուկ շեշտեց ի պատիւ տարբեր անհատների կատարուող նուիրատուութիւնների կարեւորութիւնը, ասելով, որ դրանք մնայուն ժառանգութիւն են եւ երաշխաւորում են, որ այս անհատների անունները յաւէրժ կապուած լինեն ուսանողներին աջակցելու վեհ գործի հետ:

Երեկոյի կարեւորագոյն իրադարձութիւնն էր Դոկտոր Հարրի Դեմիրճեանի յիշատակի կրթաթոշակային հիմնադրամի յայտարարութիւնը, ըստ որի աւելի քան 850,000 ԱՄՆ դոլարի նուիրատուութիւն կատարուեց համալսարանի ուսանողներին աջակցելուն՝ ըստ բարերարի ցանկութեան: Հայկական ժառանգութեան հետ խորը կապ ունեցող Դոկտոր Հարրի Դեմիրճեան կը յիշուի հայկական կրթութեան եւ մշակոյթի իր մնայուն աջակցութեամբ:

Ատենապետուհի Քէոսէեանը շնորհաւորեց նաեւ Արժ. Տ. Զաւէն Աւ. Քահանայ Ագումանեանին ծննդեան 90-ամեկի կապակցութեամբ, որի գիտական եւ հոգեւոր աւանդը մեծ է հայկական սփիւռքի կեանքում:

Տիկին Քէոսէեանն իր խօսքը եզրափակելով ասաց. «Մենք ընդամէնը 10 տարեկան ենք: Այնուամենայնիւ, մեր կարճ կեանքի ընթացքում ապացուցեցինք, որ կարող ենք մնայուն հետք թողնել հայկական որակեալ կրթութեան ձգտող երիտասարդ գիտնականների վրայ: Այսօր այս բարեբախտ առիթով հանդիսաւոր կերպով խոստանում ենք շարունակել մեր առաքելութիւնը՝ հզօրացնելով մեր հայկական դպրոցները եւ աջակցելով կարիքաւոր աշակերտներին: Մենք լրջօրէն ենք վերաբերում ձեր վստահութեանը եւ գնահատում ենք ձեր գործակցութիւնը այս վեհ գործում»:

Բուռն ծափողջոյնների ներքոյ բեմ բարձրացաւ Արեւմտեան թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանը՝ իր երախտագիտութեան խօսքը փոխանցելու եւ իր հայրական օրհնութիւնը տալու ներկաներին: Առաջնորդ Սրբազանն իր խօսքը սկսեց ուշագրաւ յայտարարութեամբ եւ յայտնեց, որ ստեղծւում է Թորգոմ Փոստաճեանի յիշատակի կրթաթոշակային հիմնադրամ՝ յարգանքի տուրք մատուցելով երիտասարդութեան մէջ հայ մշակոյթի ու լեզուի պահպանման մէջ առանցքային դեր ունեցած անհատին:

Իր զգացմունքային եւ խոհերով լեցուն ելոյթում Յովնան Սրբազանը խօսեց այն մարտահրաւէրների մասին, որոնց բախւում է Հայաստանն այսօր: Նա ընդգծեց որակեալ կրթութեան կարեւորութիւնը ապագայի համար եւ ասաց. «Կրթութիւնն այն միակ արժէքն է, որը կարող է դիմակայել ցանկացած տնտեսական կամ քաղաքական ցնցումների, այն յոյսի փարոսն է, որը կարող է առաջնորդել մեզ փոթորկի միջով: Բարձր կրթուած, պրոֆեսիոնալ, նորարար եւ մրցունակ երիտասարդ մտքերը կը ձեւաւորեն Հայաստանի եւ հայկական սփիւռքի ապագան»:

Յովնան Արք. Տէրտէրեանն իր ելոյթը եզրափակեց լորդ Ջեստերֆիլդի խօսքերով. «Գիտելիքը մեզ համար յարմարաւէտ եւ անհրաժեշտ ապաստան է մեծ տարիքում, եւ եթէ այն չտնկենք երիտասարդ տարիքում, ապա մեզ ստուեր չի տայ ծերանալիս»:

Երեկոն հասաւ իր գագաթնակետին, երբ Ատենապետուհի Քէոսէեանը յայտարարեց նուիրատուութիւնների՝ 1,000,000 ԱՄՆ դոլարի հասնող նշանակալի նուաճման մասին: Այս ոգեւորութեամբ հիւրերը հեռացան՝ խոստանալով կրկին հաւաքուել յաջորդ տարի՝ Յովնան Արք. Տէրտէրեան կրթաթոշակային հիմնադրամի պատմութեան մեջ յաջորդ եւս մէկ ձեռքբերումը արձանագրելու համար:

ՏԻՐԱՆ ԱՒԱԳԵԱՆ
Դիւան Առաջնորդարանի

****

Յովնան Արք. Տէրտէրեան կրթաթոշակի հիմնադրամը ստեղծուել է 2013 թուականին, շուրջ 500,000 ԱՄՆ տոլար է բաշխել հետեւեալ հաստատութիւններին.

- Արշակ Տիգրանեան հայկական վարժարան, Լոս Անճելըս (2014-2015)

- ՀԲԸՄ Մանուկեան-Տէմիրճեան վարժարան, Քանոկա Բարք (2014-էն այսօր)

- Փասատինայի ՀԲԸՄ Վաչէ եւ Թամար Մանուկեան վարժարան (2014-2019)

- Հայ Քոյրերի ակադեմիա, Լա Քրեսենթա (2017-ներկայիս)

- Արցախ, Քաշաթաղի շրջան, Մոչաթաղի դպրոց (2019 թ.)

- Արեւմտեան թեմի շաբաթօրեայ վարժարաններ, Պըրպենք (2014-էն այսօր)

- Փասատինայի Սուրբ Գրիգոր Ա. եւ Մ.

- Հայաստանի Ամերիկեան Համալսարան, Երեւան (2020-ներկայիս)

-FLAG Dual immersion Program, GUSD, Glendale (2019, 2023)

-C&E Merdinian Հայ Ավետարանական դպրոց, Շերման Օուքս (2017-ներկայիս)

Հետեւեալ նուիրատուութեան հիմնադրամները, որոնց ընդհանուր գումարը գերազանցում է 1,000,000 ԱՄՆ տոլարը, ստեղծուել են Աբբ. Յովնան Տէրտէրեան կրթաթոշակային հիմնադրամ. -

www.massispost.com

Հնչեց Առաջին Զանգը

Առաջին զանգը հնչեց Փասատենա քաղաքի Փեթակ (նախկին անունով Ս. Գրիգոր Լուսաւորիչ) շաբաթօրեայ վարժարանի մէջ:

9 Սեպտեմբեր 2023, Շաբաթ օր, բազմաթիւ նոր ու հին աշակերտներու, ծնողներու եւ հիւրերու ներկայութեամբ՝ հայ աշակերտներու առջեւ իր դուռը բացաւ Փեթակ հայկական շաբաթօրեայ վարժարանը: Այդ օր դպրոցի պաշտօնէութիւնը ծրագրած էր վերամուտի ամփոփ ծրագիր մը:

Շաբաթօրեայ վարժարանի աշակերտներուն նախ դիմաւորեցին դպրոցի դարպասին վրայ ծածանող եռագոյն փուչիկները, որոնք կ՚աւետէին դպրոցական ուրախ տարեշրջան մը:

Սրահի մէջ դպրոցի տնօրէն Նորայր Տատուրեան նախ ողջունեց բոլոր աշակերտները եւ անոնց մաղթեց արդիւնաւէտ տարի մը: Ան նաեւ յայտարարեց դպրոցի անուանափոխութեան լուրը ու բոլորին բացատրեց, թէ այդ սիրելի երկրորդ տունը այլեւս պիտի կոչուի «Փեթակ», պատճառաբանելով, թէ աշակերտները ժիր եւ աշխատասէր մեղուներ են եւ քաղցր է անոնց արտադրածը՝ հայրենի խօսք, երգ, աղօթք եւ ասմունք: Տնօրէնը ապա ներկայացուց ուսուցչական կազմը, եւ տարեկան ուսումնական ծրագիրը: Պաշտօնական այս բաժինէն ետք, ինչպէս աւանդութիւն է՝ դպրոցի կրտսերագոյն աշակերտը, որ երեք տարեկան աղջնակ մըն է, իր մանր ձեռքով հնչեցուց դպրոցի պղնձեայ ձեռնազանգակը՝ ժպիտ եւ երջանկութիւն պատճառելով բոլոր ներկաներուն:

Վերջաւորութեան, Փեթակի սանիկները «Մենք մանուկներ հայոց ազգի» երգը երգելով, շարան-շարան դասարաններ ուղղուեցան:

Դպրոցը կը շարունակէ 4-12 տարեկաններու արձանագրութիւնը ընդունիլ: Փեթակը այս տարի բացած է նաեւ երկու նոր դասարան. հայկական ամէնօրեայ դպրոց յաճախող հայորդիներու համար օժանդակ դասարան մը եւ հայերէնի եւ հայ մշակոյթի իմացութեան յատուկ դասարան մը՝ օտարազգի չափահաս պարոններու եւ տիկիններու համար նախատեսուած: Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել՝ 1626 660 9443 կամ՝ stgregorysaturdayschool@gmail.com

Հաղորդագրութիւն դպրոցէն

Մշակոյթի Տօնի Առիթով

Շարունակուած էջ 11-էն

րիշները հայ ժողովրդի կորուստն են ցանկանում եւ վերջ:

Նոյնպէս իւրաքանչիւր հայ ընտանիք պէտք է նախանձախնդիր լինի մեր արժէքներին ի մասնաւորի մեր լեզուի եւ աւանդութիւնների նկատմամբ: Մշակոյթը եւ հայրենիքը խաղալիք չեն, նրանց հետ պէտք է զգուշ վարուել, նրանք մեր պապերի նիւթական եւ հոգեկան աւանդն են, մեր յաւէտ ապրելու առհաւատչեան:

Ահա այս մտածումներով ու մտորումներով ընդառաջ գնանք Հոկտեմբեր ամսուան, երախտագիտութեամբ ոգեկոչենք յիշատակն այն աստղաբոյլ արարիչների եւ բոլոր այն երախտաւորների, որոնք ի սկզբանէ մինչեւ մեր օրերը պահել ու պահպանում են գանձը հայոց եւ իրենց արուեստի ստեղծագործութիւններով ճոխացրել ու հարստացնում են մեր մշակոյթի գանձարանը:

Փառք ու պատիւ նրանց:

Շնորհաւոր մշակոյթի տօնը:

MEHER BABIAN, D.D.S.
General Dentistry
Տոքթ. Մհեր Պապեան
Ատամնաբոյժ
1111 S. Glendale Ave., Suite 206
Glendale, CA 91205
Tel: (818) 547-0884
Fax: (818) 547-9360

Հայաստանի Հանրապետութեան

Շարունակուած էջ 1-էն

հակալութիւն յատնեց ջերմ ընդունելութեան համար՝ բարձր գնահատելով ՍԴՀԿ-ի կառուցողական դիրքորոշումը Հայրենիքի նկատմամբ: Ան հակիրճ կերպով ներկայացուց իր դիւանագիտական գործունէութիւնը Եւրոպական Միութեան, Միացեալ Նահանգներու եւ Պարսկաստանի մէջ, ինչպէս նաեւ իր գիտական մասնագիտութիւնը արեւելագիտութեան ու Պարսկական լեզուի մէջ:

ՍԴՀԿ Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ Ընկ Համբիկ Սարաֆեան ներկայացուց կուսակցութեան սկզբունքային դիրքորոշումները հայրենիքի ներքին ու արտաքին քաղաքականութեան նկատմամբ, որոնց մասին Հնչակեան ներկայացուցիչները շարունակաբար կը խօսին իրենց հրապարակային ելոյթներու ընթացքին: Ընկ. Սարաֆեան կարեւոր նկատեց ներքին մեր միասնականութիւնը այս հանգրուանին, երբ վտանգուած են Հայաստանի սահմանները ու Արցախը կը գտնուի շրջափակման մէջ:

Հանդիպումի աւարտին ժողովականները տեղափոխուեցան ՀԿԲՄ-ի սրահը, ուր համախմբուած էին ՍԴՀԿ-ի հովանաւորութեան տակ գործող տարբեր միաւորներու եւ կառոյցներու ղեկավարները:

Յարգելի Հիւպատոսը առիթ ունեցաւ ծանօթանալու Հայ Ամերիկեան Խորհուրդի, Կայծ Երիտասարդական Միութեան, Նոր Սերունդ Մշակութային Միութեան, Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան, Հայ Մարմնամարզական Միութեան, Տիկնանց Միութեան եւ Ընկերային Դիւանի ներկայացուցիչներուն: Ան նշմարեց ու գնահատեց մեծ թիւով երիտասարդներու ներկայութիւնը:

Հանդիպումի ընթացքին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն ու արտասանուեցան բաժակաճառեր:

Հայն Ու Իր Մտաւորականը

Շարունակուած էջ 11-էն

թենէն: Ոչ կ՚անհանգստանանք եւ ոչ ալ մեզ անհանգստացնող ունինք կամ կ՚ուզենք ունենալ: Բայց հարցը այն է, թէ ինչպէ՞ս կ՚ուզենք ազգային հաւաքականութեան մը գոյատեւումն ու բարգաւաճումը տեսնել, եթէ նոյն այդ հաւաքականութենէն ներս բացակայ է դրական քննադատողի գրիչն ու խօսքը, անոր ձայնն ու մատնանշումները:

Բայց չէ որ իր անձին վերապահելով առարկայական ցուցմունքներով մեզ առաջնորդելու անգիր իրաւունքը, մտաւորականը իր գրիչով մեզ թարմ ու այժմէական պահելու կոչուած է: Մոռցած ենք այս մէկը: Ուստի մեզի կը մնայ ունենալ քաջութիւնը զինք իր մենաստանէն դուրս բերելու ու մեր առօրեային զինք գործնականապէս մասնակից դարձնելու: Ժամանակը հասած է, որ խօսքը գործի վերածենք: Որովհետեւ մտաւորականն է, որ իր ստեղծագործ մտքի անդուլ եւ անդադար հետեւողակա-նութեամբ կը կարենայ իրականացնել եւ արդարացնել իր ներկայութիւնը, եթէ իրեն առիթ տանք: Անկասկած:

Էականը սակայն՝ մեր մտաւորականին վերադարձնելն է խօսքի ու մտքի ազատութիւնն ու առիթը:

Այսքան պարզ եւ յստակ:

Շաբաթաթերթ
ՆԱՅՐԻ
Աշխատանքային-Գրական
ԾԱԽՈՒ Է
ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ-ի
1958 - 1975 թուականներու
Լրիւ Լաթակազմ Հաւաքածոները
Յանկացողներէն կը խնդրուի հեռաձայնել հետեւեալ թիւին
626-354-5924

Աշխարհի Առաջնութիւն Ծանրամարտի Հայաստանի Հաւաքականը Գրաւած է Խմբային Առաջին Տեղը

Սէուտական Արաբիոյ մայրաքաղաք Էր Ռիյատի մէջ աւարտած ծանրամարտի աշխարհի առաջնութեան Հայաստանի հաւաքականը պայքարի ընթացքին գրաւած է խմբային առաջին տեղը կէտերու հաշուարկով: Մետալային հաշուարկով Հայաստանի խումբը 5-րդն է:

Հայաստանի խումբը երկամարտի ընթացքին նուաճած է երկու մետալ: Հայաստան նուաճած է 6 փոքր մետալ՝ 1 ոսկի, 2 արծաթ եւ 3 պրոնզ:

Փրեմիեր Լիկա. «Մանչըսթըր Սիթիի» 5-րդ Յաղթանակը

Անգլիոյ Փրեմիեր Լիկայի մրցումներուն 5-րդ անընդմէջ յաղթանակը արձանագրեց ախոյեան «Մանչըսթըր Սիթին»: 5-րդ հանգրուանին քաթալոնացի Խոսեպ Կուարտիոլայի գլխաւորած խումբը Լոնտոնի մէջ հիւրընկալեց «Ուէսթ Հեմին» եւ պարտութեան մատնեց 3:1 արդիւնքով:

«Մանչըսթեր Սիթին» 15 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը: Երկրորդ տեղը կը գրաւէ 13 կէտ վաստակած Լոնտոնի «Թոթենհեմը», որ 2:1 արդիւնքով առաւելութեան հասաւ «Շեֆիլտ Եունայթըտի» նկատմամբ:

13 կէտ ունի նաեւ երրորդ տեղը գտնուող «Լիվերփուլը»:

«Լիվերփուլի» Յաղթանակը

Անգլիոյ Փրեմիեր Լիկայի առաջնութեան 5-րդ հանգրուանին «Լիվերփուլը» հիւրընկալեց «Վուլվերհեմփթոնին» եւ յաղթանակի հասաւ 3:1 արդիւնքով:

«Լիվերփուլ» 13 կէտով երկրորդն է, «Վուլվերհեմփթոնը» 15-րդն է՝ 3 կէտ:

Մփապէի Տուպլը ՊՍԺ-ին Չօգնեց Խուսափիլ Պարտութենէն

Ֆրանսայի առաջնութեան 5-րդ հանգրուանի տնային խաղին ախոյեան ՊՍԺ-ն մրցեցաւ «Նիցայի» հետ: Սպանացի Լուիս Էնրիկէի գլխաւորած խումբը պարտութիւն կրեց 2:3 արդիւնքով:

Դաշտի տէրերու կազմէն տուպլի հեղինակ դաձաւ ֆրանսացի յարձակող Կիլիան Մփապէն:

«Նիցան» 9 կէտով բարձրացաւ երկրորդ տեղ, ՊՍԺ-ն երրորդն է՝ 8 կէտ: Առաջատարը «Մոնաքոն» է, որ 4 խաղերու ընթացքին վաստակած է 10 կէտ:

ՈՒԵՖԱ-ն Կարգապահական Վարոյթ Յարուցած է ՀՖՖ-ի եւ Պետրակովի Դէմ

ՈՒԵՖԱ-ն կարգապահական վարոյթ յարուցած է Հայաստանի ֆութպոլի ֆեդերացիայի եւ Հայաստանի ազգային հաւաքականի ուքրանացի գլխաւոր մարզիչ Ալեքսանդր Պետրակովի դէմ Եւրո-2024-ի ընտրական մրցաշարի 6-րդ հանգրուանի Հայաստան - Խորուաթիա (0:1) հանդիպման ժամանակ գրանցուած խախտումներուն համար:

ՈՒԵՖԱ-ի կայքը կը հաղորդէ, որ Ալեքսանդր Պետրակովը եւ ՀՖՖ-ն կը մեղադրուին հանդիպման մեկնարկը ուշացնելու մէջ: ՀՖՖ-ն կը մեղադրուի երկրպագուներու համար նախատեսուած անցումները արգելափակելու, հանդիպման ժամանակ քաղաքական բովանդակութեան ուղերձի:

Հայաստան - Խորուաթիա հանդիպման առաջին խաղակէսի վերջնամասին խաղադաշտի վրայ տրոնով սաւառնած էր Արցախի դրօշը, մրցախաղը մի քանի վայրկեան ընդհատուած էր:

«Ինթերը» Յաղթեց «Միլանին»՝ 5:1, Մխիթարեանի Տուպլը

Իտալիոյ առաջնութեան չորրորդ հանգրուանին գաւաթակիր եւ սուպերգաւաթակիր «Ինթերը» հիւրընկալեց «Միլանին» եւ յաղթեց 5:1 արդիւնքով: Այս խաղի ընթացքին երկու կոլ նշանակեց Հենրիխ Մխիթարեանը:

«Ինթեր» 4 յաղթանակէն յետոյ 12 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 2 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող Թուրինի «Եուվենթուսէն»: «Միլանը» երրորդն է՝ 9 կէտ:

Մատրիտի «Ռեալը» Ուժեղ էր «Ռեալ Սոսիետատէն»



Սպանիոյ առաջնութեան 5-րդ հանգրուանին փոխախոյեան Մատրիտի «Ռեալը» իր դաշտին վրայ մրցեցաւ «Ռեալ Սոսիետատի» հետ: Իտալացի Քառլօ Անչելոտիի գլխաւորած խումբը յաղթանակ արձանագրեց 2:1 արդիւնքով:

«Ռեալի» յաղթական կոլը 61-րդ վայրկեանին նշանակեց սպանացի յարձակող Խոսելուն:

«Ռեալ Սոսիետատի» կազմէն 81-րդ վայրկեանին փոխարինման դաշտ մտաւ Ռուսաստանի հաւաքականի կիսապաշտպան Արսէն Զախարեանը:

«Ռեալ» 15 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 2 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող ախոյեան «Պարսելոնայէն»:

«Պարսելոնայի» Տպաւորիչ Յաղթանակը՝ 5:0

Սպանիոյ առաջնութեան 5-րդ հանգրուանին ախոյեան «Պարսելոնան» հիւրընկալեց «Պետիսին»: Սպանացի Ջաւիի գլխաւորած խումբը յաղթեց 5:0 արդիւնքով:

Մէկական կոլ նշանակեցին փորթուկալացի յարձակող Ժոաու Ֆելիշը, լեհ յարձակող Ռոպերտ Լեւանդովսկին, սպանացի յարձակող Ֆերան Թորեսը, պրազիլցի յարձակող Ռաֆինեան եւ փորթուկալացի պաշտպան Ժոաու Քանսելուն:

ՖԻԲԱ. Հայաստանի Հաւաքականը 83-րդն է

Պասքեթպոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻԲԱ) հրապարակած է ազգային հաւաքականներու վարկանիշային նոր աղիւսակը: Հայաստանի հաւաքականը կը գրաւէ 83-րդ տեղը: Նախորդ հրապարակման համեմատ Հայաստանի հաւաքականը յառաջադիմած է 4 տեղով, կը հաղորդէ ՀԲՖ-ի մամուլի ծառայութիւնը:

2027 թուականի աշխարհի առաջնութեան նախընտրական առաջին փուլին Հայաստանի հաւաքականի հետ նոյն ենթախումբին մէջ ընդգրկուած Աւստրիայի հաւաքականը 65-րդն է, Ալպանիան կը գրաւէ 99-րդ տեղը:

Հայաստանի հաւաքականը Աշխարհի առաջնութեան ընտրական փուլի առաջին հանդիպումը կը կատարէ 2024-ի փետրուար 22-ին՝ մրցելով Աւստրիայի հետ:

ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL
ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL
Healthy Mediterranean Food Since 2008